




ԷՋՄԻԱԾԻՆ



AM 140



ԼԸ
ՏԱՐԻ



ԷԶՄԻԱԾԻՆ



ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Ա. Կոչարյանի Վերս

1981





L. C.
SUPP.


ՀՐԱՄԱՆԱԻ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ
ՎԵՆԱԹԱՌ ԵՒ ՍՐԵՋԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՍ
ՎԵՆԱԹԱՌ ԵՒ ՍՐԵՋԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Կաթոլիկոս

1891





ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
Կ. ՊՈԼՍԻ ՍՈՒՐԲ ՓՐԿԻՉ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ
ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԱՐՅՈՒՐՀԻՍՈՒՆԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

ՍՈՒՐԲ ՓՐԿԻՉ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ՅԱՐԳԱՐԺԱՆ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ, ԲԺՇԿԱԿԱՆ ԴԱՍՈՒՆ, ՊԱՇՏՕՆԷՈՒԹԵԱՆ ԵՒ
ՀԱՄԱՅՆ ՀԱՒՏԱՑԵԱԼ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ, ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱՇՆԻ ՈՂՋՈՐՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ
ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Իսթանպուլ

Ամենաբարին Աստուած Թուրքիոյ հայութիւնը բախտաւորեց 1832 թուականին, հիմնադրումովը ազգապարծանք Ս. Փրկիչ հիւանդանոցի, որու հաստատման 150-ամեակը կը պատրաստուիք տօնել 1982 թուականին, յատուկ հանդիսատրութեամբ:

Մարդասիրական այս հաստատութիւնը, ինչպէս յայտնի է, հիմնադրումած հայ ազգի մեծանուն զաւակ հոգեւոյն Յարութիւն ամիրա Պեգեաւանի բարոյական և նիւթական լայն օժանդակութեամբ, որ ահա հարիւր և յիսուն տարիներէ ի վեր նախախնամական դեր կը կատարէ Իսթանպուլի և առհասարակ Թուրքիոյ հայոց մէջ, շրջապատում համայն մեր ժողովորդի սիրովը, գորգուրանքովը և երախտագիտութեամբը:

Վոսիորի ափերուն բարձրացած Եւտիքուլէի ազգային հիւանդանոցը, տարիներ շարունակ միշտ հաւատարիմ իր առաքելութեան, մշտապէս մարմնական բուժում և հոգեկան սփոփանք բաշխած է բոլորիդ ու բոլորին անխտիր, ի միտթարութիւն հաւատացեալ մեր ժողովորդին:

Երկնային օրհնութիւն կը հայցենք պանծալի անուն Յարութիւն ամիրա Պեգեաւանի, շինութեան ճարտարապետ Կարապետ ամիրա Պաւեանի, շինու-

թեան ղեկավար Պօղոս աղա Օտեանի, նաև բոլոր միւս բարերարներու և կտակակաւարներու անբաւամ յիշատակին, որոնք իրենց նոյնբարեբուհներով, կտակներով ու աշխատանքով, կեանքի կոչած և ապրեցուցած են մարդասիրական սույն նոյնբարեբուհի հաստատութիւնը:

Այս երջանիկ առիթով անհուցօրէն միիթարուած, և ընդատաշելով Քոյրքիոյ Հայոց բարեխնամ Պատրիարք Ամենապատիւ Տ. Ենօրհիք արքեպիսկոպոս Գալուստեանի խնդրանքին, ձեզի ամենող՝ ճիւղանցանցիոյ հոգարարութեան անդամներուն և պատասխանատու տնօրէնին, բժշկական անձնուրաց անձնակազմին և համայն պաշտօնէութեան, բարերարներուն և նոյնբարեբուհներուն կը բերենք Մեր Հայրապետական օրհնութիւնը ջերմագին մաղթանքներով, որ Տէրը յաւիտ անասան ու լուսաշող պահէ Ս. Փրկիչ ազգային ճիւղանցանցը, յորախոյրին և հպարտանք ձեզի ամենող, ձեր զաւակներուն և զայիք սերունդներուն:

Աղօթող ենք նաև որ Քրիստոսի սիրով միարանած, ամուր մնար ձեռնախառնարներու սուրբ հաւատքի վեմին վրայ և իբրև հարազատ եղբայրներ ապրիք ու գործէք խաղաղութեամբ և հոգեկան սուրբ ներշնչումներով, Մեր սիրեցեալ եղբայր և ձեր հոգևոր հայր՝ Ամենապատիւ Տ. Ենօրհիք սրբազան Պատրիարքի հովանիի և օրհնութեան ներքև:

«Ձխաղաղութեան զհետ երթայք ընդ ամենեւին և զսրբութեան, առանց որոց ոչ որ տեսանիցէ զՏէր» (Եբր. ԺԲ 14): Ամէն:

Գրեցաւ Ս. Ենօրհիք

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա կոնդակս ի 16 սեպտեմբերի
1981 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՍՎ
ի մարտական Սրբոյ Էջմիածնի:
ՀՄՐ. 1072





**ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ՔԱՆՎԵՑՅԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ**

Սեպտեմբերի 27, կիրակի. Տօն Վարագայ Սրբոյ Խաչի.

Այսօր Հայաստանյայց Առաքելական և սուրբ եկեղեցիներում, որ ի հայրենիս և ի պիյոտս աշխարհի, հանդիսավորությամբ և ավանդական շուքով նշվում է Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա Սրբազնագույն կաթողիկոսի գահակալության քսանվեցերորդ տարելարձը:

Ժամը 12-ին Հայոց Հայրապետը Վեհարանից եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր տաճար՝ ներկա լինելու ս. պատարագին և նախագահելու Հայրապետական մաղթանքին:

Մայր տաճարի աջակողմյան և ձախակողմյան դասերում, ատյանում տեղ էին գրավել հայրապետական գահակալության առիթով Մայր Աթոռ ժամանած բազմաթիվ ովստավորներ Արգենտինայից, ԱՄՆ-ից, Կանադայից, Ավստրալիայից, Լոնդոնից, Ժնևից, Կահիրեից, Դամասկոսից, Բելյուսից և այլ գաղթօջախներից, որոնք երկ-

յուղած բարեպաշտությամբ հետևում էին ս. պատարագին:

Ս. պատարագին ներկա են պաշտոնական այլ անձինք:

Օրվա սուրբ պատարագը մատուցում է Անգլիայի հայրապետական պատվիրակ և առաջնորդ Տ. Ներսես եպս. Պոզապայլյանը, որն այս առիթով ժամանել էր Մայր Աթոռ:

Սուրբ պատարագին ներկա են նաև Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Արսեն եպս. Բերբերյանը, հայրապետական գահակալության առիթով Մայր Աթոռ ժամանած Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակ և առաջնորդ Տ. Դավիթ եպս. Սահակյանը, Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ ծ. վրդ. Ասատուրյանը, Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Ոսկան ծ. վրդ. Գալքակ-

յանը, սփյուռքից ժամանած քանանա հայրեր:

Ա. պատարագին ներկա են ՀԱՍՁ Միանորթների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռուբեն Պարսամյանն ու տեղակալ տիար Անդրանիկ Հասարայանը:

«Հայր Մեր»-ից առաջ պատարագիչ սրբազանը Առաքել վարդապետ Դավրիժեցու «Հայոց պատմություն»-ից վերցված «Քանգի ի վերայ Աջոյն և սրբոյ Էջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կայ» համազգային դավանանքի բնարանով խանդավառ քարոզ է խոսում նվիրված Հայոց Հայրապետի քանակեց տարիների հոգևոր, եկեղեցական, կրթական, մշակութային, շինարարական, հասցեենասիրական, խաղաղամիրաբան ու միջեկեղեցական բեղմնավոր գործունեության մասին՝ շեշտելով, որ հորեկար Հայոց Հայրապետը մեկն է մեր ազնվական ու անձնդիր կաթողիկոսներից, Որն Իր արի ու քարի ձեռքերում է պահում Ամենայն Հայոց Հայրապետության ծաղկալ ու օրհնյալ գավազանը, կոչումի և պարտքի խորունկ գիտակցությամբ, արժանանալով միաժամանակ ո՛չ միայն մեր ժողովրդի, որ ի հայրենիս և ի սփյուռս աշխարհի, այլ նաև քրիստոնեական եկեղեցիների և պետական քարձք շրջանակների ուշադրության, խաղաղասիրական, ժողովուրդների եղբայրության, եկեղեցիների ի Քրիստոս սիրո միության, ազգերի համագործակցության իր սրտատուչ ու բոլորակներ ջանքերով:

Քարոզից հետո, Հայոց Հայրապետի նախագահությամբ, Մայր տաճարում, Ավագ սեղանի ստյանում, կատարվում է Հայրապետական մաղթանք՝ Հայոց Հայրապետի կենաց արևշատության, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անսասանության, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պայծառության, հայրենյաց քարօրության և հայ ժողովրդի միասնության սրտարուխ մաղթանքներով:

Ա. պատարագից հետո Հայոց Հայրապետն առաջնորդվում է Վեհարան, ընդունելության դահլիճ, որտեղ շնորհավորանքներ է ընդունում Իր գահակալության բերկրառիթ տարեդարձի առիթով:


Ժամը 15-ին Գերագույն Հոգևոր Խորհուրդը, ի պատիվ Հայոց Հայրապետի ընդունելությունն է կազմակերպում՝ Նրա գահակալության քանակեցերորդ տարեդարձի առիթով, Վեհարանի սեղանատանը:


Ընդունելությանը ներկա էին Ս. Սիոն, Տ Արսեն, Տ. Ներսես, Տ. Դավիթ սրբազանները, Տ. Ավագ և Տ. Ոսկան ծայրագույ վարդապետները, Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայրավանքի պատասխանատու, դեկավար աշխատողները:

Հրավիրյալների թվում էին Մայր Աթոռ քարերարներ տիկին Մարթա Դիարբեքիյանը (Բունեսու Այրես), տեր և տիկին Օելեֆյանները (Ժճև), պարոն և տիկին Շիշմանյանները (Ժճև), տեր և տիկին Աբաջյանները (Բրյուսել), տեր և տիկին Տանձիկյանները (Բելյուր) և այլ հյուրեր Մաշկերույթի ընթացքում, որն անցաւ արտագին մթնոլորտում, Հայոց Հայրապետի գահակալության քանակեցերորդ տարեդարձը ջերմ կույթներով շնորհավորեցին Ս. Սիոն արքեպիսկոպոսը, տիար Ռուբեն Պարսամյանը, տիար Մկրտիչ Օելեֆյանը:

Վերջում Հայոց Հայրապետը Իր պատասխան խոսքում շնորհակալություն հայտնեց օրվա տոնի առիթով արտահայտված անկեղծ ու ջերմ խոսքերի համար, օրհնեց ազգն ու եկեղեցին, հայրենիքն ու ժողովուրդը:

Հայոց Հայրապետի գահակալության քանակեցերորդ տարեդարձի առիթով կազմակերպված ընդունելությունն ավարտվու է Նորին Սուրբ Օծության զոհարանակալ աղոթքով ու «Պահպանիչ»-ով:





ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐԶԱՆԻ ԲԱՅՈՒՄԸ

Սույն թվականի սեպտեմբերի 8-ին, երեքշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի է ունենում ճեմարանի 1981—82 ուսումնական տարեշրջանի բացման հանդիսությունը՝ նախագահությամբ Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Ս. Սիրոն արքեպ. Մանուկյանի:

Հանդիսությանը ներկա էին Մայր տաճարի լուսարարապետ Ս. Հուսիկ արքեպ. Սանթրոյանը, Արարատյան թեմի առաջնորդական հիոխանորդ Ս. Արսեն եպ. Բերքերյանը, Վրահայոց թեմի առաջնորդ Ս. Գևորգ եպ. Սերայդարյանը, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի տեչությունն ու դասախոսական կազմը, ուսանողությունը, մայրավանքի պաշտոնեությունը և այլ հյուրեր:

Հանդիսությունը սկսվում է խմբովին արտասանած «Տերունական աղոթք»-ով, որից հետո հոգևոր ճեմարանի սաները կատարում են «Ծեմարանի քայլերգ»-ը:

Այնուհետև ճեմարանի դասախոս Ս. Զատիկ արք. Ավետիքյանը ընթերցում է Ավետարանի «Սերմնացանի առակը» (Մատթ. ԺԳ 4—9) հատվածը:

«Աշակերտք Քրիստոսի» և «Որք գարդարեցին» շարականների երգեցողությունից հետո Նարեկի «Աղերս առ Ա. Հոգին» (Բան 17) հատվածը կարդում է Գ. լսա-

րանի ուսանող Սմբատ արկ. Արիստակեսյանը:

Ուսումնական տարվա վերաբացման առթիվ հոգևոր ճեմարանի տեսուչ Ս. Եզնիկ քհն. Պետրոսյանը կարդում է հետևյալ խոսքը.

ՏԵՍԶԻ ԽՈՍԷԸ

Աստուծո ղորրմությամբ և Ամենայն Հայոց Վեհապատ Հայրապետի օրհնությամբ բոլորս հավաքվել ենք այստեղ՝ կատարելու համար Ա. Էջմիածնի Հոգևոր Ծեմարանի 1981—1982 ուսումնական տարեշրջանի բացումը:

Քիչ հետո լսվելու է այս տարեշրջանի առաջին զանգը: Հոգևոր Ծեմարանի դասախոսությունը և ուսանողությունը, ամառային հանգստից հետո, արտասրտի սպասում են դասարան մտնելուն: Երեկ հետաքրքիր եռօրյա էր Հոգևոր Ծեմարանում: Ուսանողները մեծ հրճվանքով ստանում էին իրենց նոր դասագրքերը, հետաքրքրությամբ թերթում դրանք, գրուցում միջանց հետ այս կամ այն առարկայի, այս կամ այն դասագրքի մասին, բմանք էլ, որոշ դասագրքերի բովանդակությանը ծանոթանալու համար փորձում էին կարդալ մեկը, սպա անհամբերությունից մի կողմ էին դնում այն և մեկ ուրիշը վերցնում....

Հոգևոր Ծեմարանի տեսչությունը վստահ է, որ ուսանողների այս եռանդը ժամանակավորեալ չի լինի, այլ կշարունակվի մինչև տարեկերչ, և թող Աստված տա, որ այն շարունակվի նաև հետագայում:

Այս տարի Հոգևոր Ծեմարանը իր աշխատանքները սկսում է 40 ուսանողով: Սպասվում է 10 ուսանող ևս՝ 7 Քերտուծից և 3-ը հարդադից:

Եթե մեր ուսանողները ցանկանում են սովորել, ձեռք բերել կայուն գիտելիքներ, ապա մեր դասախոսները նույն եռանդով և սիրով պատրաստ են կրթելու և դաստիարակելու նրանց:

Այս տարի Հոգևոր Ծեմարանի դասախոսական կազմը հիմնականում մնում է նույնը: Պետք է հիշել սակայն, որ Տ. Անահիա վրդ. Արարաջյանը Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ մեկնելու է Ադրբեջան՝ ծառայելու տեղի հայոց թեմում որպես առաջնորդական տեղապահ:

Մյուս կողմից մեր դասախոսական կազմը համալրվել է մի նոր ուժով: Ընդառաջելով Վեհափառ Հայրապետի ցանկությանը և Հոգևոր Ծեմարանի տեսչության հրավերին, Լոնդոնից Մայր Աթոռ փոխադրվեց Տ. Հայկազուն արևոյա Նաջարյանը՝ դասավանդելու Ս. Էջմիածնի Հոգևոր Ծեմարանում:

Հայկազուն Հայր Սուրբը 1978 թվականին ավարտել է Հոգևոր Ծեմարանը, իսկ 1978 թվականին՝ Լոնդոնի Քինգս Բոլեյի աստվածաբանական ֆակուլտետը:

Ինձ քաջ հայտնի է նրա ջերմ սերը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հոգևոր Ծեմարանի նկատմամբ:

Հոգևոր Ծեմարանի տեսչությունը այս հանդիսավոր առիթով քարի գալուստ է մաղթում սիրելի Հայ Սուրբին և ցանկանում ամենայն հաջողություն իր ուսուցչական աշխատանքում:

Այս տարի Ծեմարանի վարչական կազմը հետևյալն է.

- Տեսուչ՝ Եզնիկ քին. Պետրոսյան
- Ընդհանուր դաստիարակ՝ Ստեփանոս արևոյա Զարսյան
- Վերակազմակերպ

- պ. Վաչագան Հովհաննիսյան
- պ. Ասովեն Պետրոսյան
- պ. Վարդգես Մկրտչյան
- Քարտուղար՝ պ. Գարուշ Լազարյան
- Գրադարանավար՝ պ. Հենրիկ Բայրան

Սիրելի հանդիսականներ,

Մեզ բոլորիս հայտնի է Վեհափառ Հայրապետի սերը և հոգատարությունը Հոգևոր Ծեմարանի նկատմամբ: Ծավոք այսօր Նորին Սրբությունը անհնազատության պատճառով չկարողացավ ներկա գտնվել և նախագահել այս հանդիսությանը: Սակայն, ի ցուցումն Իր սիրո՝ մեզ է ողորկել այս գեղեցիկ արձանիկը, որ պատկերում է Սուրբ կույս Աստվածածնին մանուկ Հիսուսը գրկին:

Այնուհետև տեսուչ տեր հայրը հրավիրում է հանդիսությունը նախագահող Տ. Սիոն արքեպ. Մանուկյանին՝ տալու համար օրհնության իր խոսքը հոգևոր Ծեմարանի տեսչության, դասախոսական կազմին և ուսանողության:


Սրբազան հայրը նախ բոլոր ներկաներին փոխանցում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրհնություններն ու բարի մաղթանքները և ապա շարունակելով իր խոսքը վեր է հանում մեր ժողովրդի անցյալի պատմության մեջ հոգևոր դրսբողների ու դպրեվանքների կատարած մեծ դերն ու նշանակությունը ազգային մշակույթի և կրթության օարգացման բնագավառում՝ միաժամանակ ընդգծելով այսօր էլ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր Ծեմարանի առաքելությունն ու նպատակը մեր ժողովրդի ծոցում ի Հայաստան և ի սփյուռքս աշխարհի:

Սրբազան հայրը մաղթանքներով ավարտում է իր խոսքը, աղոթում հոգևոր Ծեմարանից ներս կատարվելիք ուսումնադաստիարակչական բոլոր աշխատանքների քարի արդյունքների համար:

Հանդիսությունը ավարտվում է Սրբազան հոր «Պահպանիչ»-ով և խմբովին երգված «Հայր մեր»-ով:

Նույն օրը, ժամը 12-ին, սկսվում են հոգևոր Ծեմարանի դասընթացները:





**ՌՈՒՄԻՆԱՀԱՅ ԹԵՄԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԻ
ՀԱՍՏԱՏՄԱՆ 580-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ԲՈՒՆԱՐԵՍՏԻ ԵՎ ՍՈՒՉԱՎԱՅԻ
ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ**

Այս տարի լրացավ Մոլդավիայի Ալեքսանդր 2ել Բունի [Բարի] իշխանի 1401 հուլիս 30 թվակիր պարզևած հրովարտակի 580-ամյակը, որով երկրի մայրաքաղաք Սուչավայում հաստատվում էր առանձին եպիսկոպոսական Աթոռ Մոլդավիայի հայերի համար:

Նորահաստատ հայոց եպիսկոպոսական թեմի առաջնորդ է եղել Հովհաննես եպիսկոպոսը, որպես «Ամենայն Ընսած և Վլախաց», այսինքն Արևմտյան Ուկրաինայի հայ եկեղեցիների թեմակալ, որի ղեկավարության ներքո են մտնում Մոլդավիայի բոլոր հայ եկեղեցիները:

1365 թվականին հաստատվում է Լվովի հայոց թեմը, որի իրավասության ներքո էին գտնվում Մոլդավիայի բոլոր հայ եկեղեցիները:

1401 թվականից սկսած ամեն տարի սովորություն է եղել Ս. Աստվածածնի տոնին հանդիսավորությամբ և ժողովրդական տոնակատարությամբ նշել այդ պատմական նշանավոր տարեթիվը, որպես ռումինահայ թեմի տարեգրության կարևորագույն իրադարձությունը: 1407 հոկտեմբեր 8 թվակիր նույն Ալեքսանդր իշխանի հրովարտակով շուրջ 8000 հայեր Լվովից գաղթելով, հաստատվում են Մոլդավիայի Սուչավա, Սիրեթ, Չերնրոց և այլ չորս քաղաքներում: Պատմական փաստ է, որ Լվովի հայ գաղթականությունը կազմվել է Բագրատունյաց իշխանության մայրաքաղաք Անիի գրավումից (1064) հետո դեպի Լվով հայ գաղթականների արտագաղթով:

Այս տարի էլ, օգոստոսի 2-ին, նախագահությամբ թեմի առաջնորդ Տ. Տիրայր

արքեպ. Մարտիկյանի, Բուխարեստում, Ս. Հրեշտակապետաց եկեղեցում, այս առթիվ կատարվել է հոբելյանական հանդիսություն, խանդավառ մթնոլորտում:

Օրվա հանդիսավոր պատարագը մատուցել է Տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանը, որը սուրբ պատարագի ընթացքում ընթերցել է Ալեքսանդր Բարի իշխանի 1401 հուլիս 30 թվակիր պաշտոնական հետևյալ հրովարտակի հայերեն թարգմանությունը.

«Աստուծո գթությամբ, մենք Ալեքսանդր Վոլվոս, իշխան Մոլտովայի երկրին եղբորս Բուկտանի հետ, մեր այս գրությամբ կծանուցանենք բոլոր բարեմիտ ազնվականներուն, որոնք պիտի տեսնեն այս գրությունը կամ լսեն անոր մասին, որ Հովհաննես Հայագգի Եպիսկոպոսը մեզի եկավ, մոլտովական մեր Աթոռին և ներկայացավ մեզ Պոլսո Տիեզերական Պատրիարք Անտոնիեի վավերական նամակներով, վասն զի իրենց հայ Պատրիարքը չենք ճանչցած տակավին, որպեսզի մեր պարոն Վիթովտի աջակցությամբ բարձրանա այս առաջնորդության Աթոռը: Ան, նույնպես, երդվելով հավաստեց մեր իշխանապետությունը ընդունիլ և հաստատել ամբողջ եկեղեցական կարգը:

Ուստի մենք հանձնեցինք հայագգի Հովհաննես եպիսկոպոսին հայկական եկեղեցիները և անոնց քահանաները: Մեր ամբողջ երկրին մեջ Հայոց վրա ի գորու պիտի ըլլա իր եպիսկոպոսական իրավասությամբ: Իր Աթոռը հաստատեցինք Սուչավայի մեր բերդաքաղաքին մեջ: Բոլոր հայերդ որ պիտի պատվեք զինքը՝ մե՛զ համար կատարած պիտի ըլլաք, մեր Մոլ-



Սուցախալսում, ուխտի օրը



Մի պահ ուխտագնացությունից և մատուռի օրհնությունից

տովայի երկրին մեջ. ով որ չի հնազանդի անոր, մենք պիտի պատժենք զայն՝ իր ձեռքով:

Այս է ուրեմն իմ հավատը, վերոգրյալ Ալեքսանդր Վոլպոտին և հավատը իմ եղբորս Բոկտանին և հավատը բոլոր Մոլտովացի մեծ և փոքր ազնվականներուն: Եվ գրյալ է ի Սուչավա, մեր խնամակալության տակ համին (8909) 1401 հուլիս 30 Պրատեի ձեռամբ»:

Այնուհետև Ս. Զարեհ ծայրագույն վարդապետը «յունկն ժողովրդեան» ընթերցել է նաև Ամենայն Հայոց Հայրապետի հետևյալ շնորհավորական հեռագիրը, օրվա հորեղյանական հանդիսության առթիվ.

«Սրտանց կողջունենք ումեն բարի հողին վրա հայոց առաջնորդության հաստատման 580-ամյակը: Այս պատմական երջանիկ առիթով կօրհնենք պայծառ հիշատակը Ալեքսանտրու Չել Պուն մեծահոգի Մոլտավիտ իշխանին, որ իր հայրենաշեն փայլուն իրագործումներով հանդիսացավ ումանական ազգի պատմության փառքերեն մեկը:

Սուրբ Էջմիածնեն կհղենք նաև մեր ողջույնը և օրհնությունը Ջերդ Սրբազնության, Թեմական Խորհուրդին, Ջեր եկեղեցական համայնքներուն և համայն ումանահայ հավատացյալներուն, մաղթելով բոլորիդ Աստվածային օրհնություն և մրջտանորոգ շնորհներ, շարունակելու Հայ Առաքելական Եկեղեցվո առաքելությունը ումանական օրհնյալ հողին վրա, միշտ հավատարիմ ումեն պանծայի հայրենիքին և ումեն ազնվասիրտ ժողովուրդին: Թող Աստված միշտ անասան և միշտ լուսամիտ պահպանե մեր Մայր Եկեղեցին: Ամեն»:

Ապա այս առթիվ Ս. Տիրայր արքեպիսկոպոսը հոգեշունչ բարոգ է խոսել՝ շեշտելով մասնավորաբար «այն բացառիկ կարեվորությունը գորս ունեցավ Մոլդովայի փառավոր եկեղեցիներու և վանքերու պահպանման համար Ալեքսանդր Բարի իշխանի 30 հուլիս 1401 թվակիր հրովարտակը»:

Դարերի ընթացքում Ռումին ասպնջական հողի վրա Մոլդավիայի հայոց թեմը ունեցել է 19 առաջնորդներ, որոնցից հիշենք՝ Ղազար Բաբերդցին, Մինաս Չիլիֆդար, Հովսեփ Արղության, Գրիգոր Զաքարյան, Մեղիսեդեկ Մուրադյան, Խորեն Նարպեյ, Հուսիկ Զաքարյան, եպիսկոպոսներ և արքեպիսկոպոսներ, որոնք թեմի եկեղեցական, մշակութային, կրթական ու շինարարական գործունեության համար կատարել են մեծ ու մնայուն աշխատանքներ:

Երախտագիտությամբ պետք է հիշել



Ս. Օգանտիոս հայոց եկեղեցին Զամբալում


սրբազան առաջնորդների այդ շարքում նաև սիրելի անունն ու արդյունավետ գործը Ս. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի, Որը 1943—1955 թվականներին փառավորապես ղեկավարեց Ռումինիայի հայոց եպիսկոպոսական թեմը, մինչև Իր կաթողիկոս ընտրությունը, 1955 հոկտեմբեր ամսի 1-ը:

Որպիս եւք արձանագրելու, որ ավելի քան 20 տարիներ այդ թեմը ձեռնհասորեն ղեկավարում է արդի առաջնորդ Ս. Տիրայր արքեպ. Մարտիկյանը, որպես հոգևոր «որդի հարազատ» Վեհափառ Հայրապետի:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան մասնավոր պաշտոն ումինահայ հանգուցյալ բոլոր առաջնորդների հիշատակին:

Օգոստոսի 15—17 օրերին հորեղյանական հանդիսություններ են կատարվել նաև նույն առիթով Սուչավա քաղաքի Հանկատար վանքում, Սուրբ Աստվածածնի տոնին՝ նախագահությամբ Ս. Տիրայր արքեպ. Մարտիկյանի:

Վերջերս Սուչավայի հայ եկեղեցիների հոգևոր հովիվ է նշանակվել Մայր Աթոռի երիտասարդ միաբան և հոգևոր ճեմարանից շրջանավարտ Ս. Արամայիս արդ. Ելուկյանը: Այս առթիվ առաջնորդ սրբա-



Hrisovul lui Alexandru cel Bun din 30 Iulie 1401



Մոլդավիայի իշխան Ալեքսանդր Չել Բունի (Բարի) հրովարտակը 1401-ին

զանի թելադրությամբ կատարվել են Սուչավայի հայ եկեղեցիների վերանորոգություններ և ներքին ձևավորումներ: Քաղաքի բոլոր հայկական եկեղեցիներին տեղադրվել են հայերեն և ռումիներեն լեզուներով հուշատախտակներ:

Սուչավա քաղաքում հրքելյանական հանդիսություններից նախագահելու համար այստեղ է ժամանում Ս. Տիրայր արքեպիսկոպոսը, որը օգոստոսի 15-ին, շաբաթ օրը, «Հրաշափառ»-ով մուտք է գործում Սուչավայի Ս. Խաչ եկեղեցի և նախագահում երեկոյան ժամերգությանն ու ապա Հսկումի արարողությանը:

Օգոստոսի 16-ին, կիրակի օրը, Ս. Աստվածածնի տոնին, առափոտյան, սրբազանը, ի գլուխ ուխտավորական մի մեծ խմբի, քարձրանում է Հաճկատար վանք՝ պատարագելու օրվա տոնի առիթով:


Սուրբ պատարագի երգեցողությունը կատարում են Սուչավա և Կոստանցա քաղաքների հայ եկեղեցիների միացյալ երգչախմբերը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է պատարագիչ սրբազանը, օրվա հանդիսության հոգևոր, եկեղեցական, պատմական նշանակության մասին, ընթերցում Ամենայն Հայոց Հայրապետի շնորհավորական հեռագիրը և Ալեքսանդր Չել հունի իշխանի 1401 հուլիս 30 թվակիր հրովարտակը՝ Մողղափայտում հայկական առաջին եպիսկոպոսական Աթոռ հաստատելու մասին:

Հավարտ ու պատարագի տեղի է ունենում «Օրհնված ականջ ապուր»-ի և մատաղի օրհնություն՝ ղեկավարությամբ Ս. Արամայիս արեղա Շլուկյանի:

Ռումիևահայ թեմի առանձին եպիսկոպոսական Աթոռի հաստատման 580-ամյակի առթիվ սույն տեղեկությունները քաղվել են խմբագրություն ուղարկված Ս. Արամայիս արեղայի և Քր. Օտապաշյանի ուղարկած թղթակցություններից, որի համար հայտնում ենք մեր մասնավոր շնորհակալությունները:





ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐԱԳԱՎԻԹ ԹԱՂԱՄԱՍԻ Ա. ԳԵՎՈՐԳ
ԵԿԵՂԵՑՈՒ ՍԵՂԱՆԻ ԾՈՌԻՄԸ

Սեպտեմբերի 26-ին, շաբաթ օրը, Ա. Գևորգ Զորավարի տոնի առթիվ, Երևանի Նորագավիթ թաղամասի Ա. Գևորգ եկեղեցում հանդիսավորությամբ օծումը կատարվեց եկեղեցու խորանի Աստվածամոր նկարի:

Վաղ առավոտյան եկեղեցին լեցուն էր ուխտավորներով, որոնք եկել էին հալոնների տարրեր շրջաններից: Հանդիսությանը ներկա էին նաև սփյուռքահայ ուխտավորներ, Մայր Աթոռի բարերարներ տեր և տիկին Տաննիկյանները, տեր և տիկին Շեղեֆյանները, Բկյուրի կրոնասեր Տիկնանց Համախմբումի անդամուհիները, ամերիկահայ ուխտավորներ:

Ժամը 11-ին սկսվում է օծման արարողությունը: Օրվա արտարագիչն էր Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Արսեն եպս. Բերբերյանը, որը օծում է եկեղեցու Խորանն ու Աստվածամոր նկարը սրբալույս մոտոնով:

Օրվա հանդիսությանը մասնակցում էին նաև Արարատյան թեմի եկեղեցիների քահանա հայրեր: Ա. պատարագի երգեցողությունը կատարում էր եկեղեցու նորակազմ երգչախումբը՝ խմբավարությամբ Գևորգ Մուրադյանի:

«Հայր մեր»-ից առաջ Տ. Արսեն եպիսկոպոսը քարոզում է «Եկարք շինեցուք

սուրբ զխորանս լուսոյ քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի» շարականի բնաբանով:

Ա. Սեղանի օծման կերահայրն է Հովհաննես Բարսեյանը, իսկ Ա. Աստվածածնի նոր նկարի նվիրատուն՝ Հարություն Իջյանը:

Տ. Արսեն սրբազանը գնահատանքի խոսք է ուղղում նվիրատուներին և եկեղեցու հոգևոր դասին, երգչախմբին և Եկեղեցական Խորհրդին ու նրա նախագահ տիար Արամ Մարգարյանին՝ նրանց եկեղեցանվեր գործունեության համար:

Ա. պատարագից հետո եկեղեցու հոգաբարձության կողմից տրվում է «ճաշկերույթ» օրվա հանդիսության առիթով՝ որին ներկա են լինում եկեղեցական դասը, երգչախումբը, Թեմական Խորհրդի անդամները և մասնավոր հրավիրյալներ:

Սրբազան հոր «Պահպանիչ»-ով սվարովում է ճաշկերույթը:


Սեպտեմբերի 26-ի եկեղեցական հանդիսությունը ջերմ խանդավառությամբ է ըստեղծում մայրաքաղաքի Նորագավիթ թաղամասի հավատացյալ ժողովրդի սրտում և մի նոր էջ ավելացնում Արարատյան թեմի եկեղեցական գործունեության պատմության մեջ:



Մի պահ եկեղեցու Սուրբ Խորանի օծման հանդիսությունից



Շկլյոնի կենտրոնում մտնող միջնակարգուհիներ



ՄԱՍՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏՎՂՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբերի 16-ին, Ռինգշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, Օջականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում տեղի է ունենում մասնավոր վարդապետական աստիճանի տվչություն:

Վսեմայն Հայոց Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Ս. Արսեն եպս. Բերբերյանը մասնավոր վարդապետական աստիճան է շնորհում Մայր Աթոռի երիտասարդ միաբան Ս. Մյուռն արեղա Գըվրգյանին:

Ս. Մյուռն արեղա Գըվրգյանը նախապես իր վարդապետական ավարտաճառը ներկայացրել էր Վեհափառ Հայրապետին: Սեպտեմբերի 15-ին հոգևոր ճեմարանում տեղի է ունենում ավարտաճառի բանավոր պաշտպանությունը՝ նախագահությամբ Գեորգույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Ս. Միոն արքեպս. Մանուկյանի:

Ավարտաճառի թեման էր՝ «Աստված, Մարդ և Օրենք», որը բաղկացած էր 76 մեքենագրված էջերից, 12 գլուխներից և 14 ենթավերնագրերից:

Վեհափառ Հայրապետի կողմից նշանակված հանձնաժողովը, որի կազմում էին Ս. Արսեն եպս. Բերբերյանը՝ որպես նախագահ, «էջմիածին» անագրի խմբագիր և հոգևոր ճեմարանի դասախոս պ. Արթուն Հատիսյանը և Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար և հոգևոր ճեմարանի դասախոս պ. Պարզև Ծախրազյանը, հանգամանորեն ընթերցել էին Ս. տական լանջախաչ:

Մյուռն արեղա Գըվրգյանի ավարտաճառը և իրենց գրավոր զեկուցման մեջ նշել աշխատության մասին իրենց կարծիքն ու գնահատականը:

Պաշտպանության ժամանակ, որին ներկա էին Մայր Աթոռի միաբանները, դասախոսական կազմը, ուսանողությունը, հանձնաժողովը ներկայացված աշխատությունը գնահատում է բավարար և հրավիրում աշխատասիրողին հանդես գալ իր ավարտաճառի բանավոր պաշտպանությամբ:


Ս. Մյուռն արեղան պատասխանում է նաև հանձնաժողովի անդամների և ներկաներից ոմանց տված մի շարք հարցերին:


Քննիչ հանձնաժողովը աշխատասիրողի ավարտաճառի բանավոր պաշտպանությունը գնահատում է **Լավ**:

Հաջորդ օրը, սեպտեմբերի 16-ին, ժամը 11-ին, Օջականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում սկսվում է «Կանոն մասնաւոր իշխանութեան» տվչության կարգի արարողությունը:

Արարողության վերջում Ս. Արսեն եպս. Բերբերյանը շնորհավորոթք է նորընծա վարդապետին:

Վերադառնալով Մայր Աթոռ, Ս. Մյուռն վրդ. Գըվրգյանը ներկայանում է Վեհափառ Հայրապետին՝ ստանալու Նորին Արքայության օրհնությունն ու շնորհավորանքը: Վեհափառ Հայրապետը հայրական ջերմ սիրով ընդունում է Ս. Մյուռն վրդ. Գըվրգյանին և նրան շնորհում վարդապետական լանջախաչ:





Մասնաժողովի անդամները Երևանի Կաթողիկոսական Սուրբ Երզնկայի վանքի մտնելիս (Պատկերը Գրիգորյանի Գրքանոցից է)

Այս պատկերը 1881 թվականից է և ցույց է տալիս Երևանի Կաթողիկոսական Սուրբ Երզնկայի վանքի մտնելիս գտնվող անդամներին։ Պատկերը Գրիգորյանի Գրքանոցից է։



Տ. ՄՅՈՒՌՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԸՎԸԳՑԱՆ

Ծնվել է 1950 թ. հուլիսի 23-ին, Լիբանանի Տրիպոլի քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է տեղի Խրիմբան-Նուպարյան ազգային վարժարանում, իսկ 1968 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան:

1967 թ. դեկտեմբերին, Ս. Ստեփանոսի տոնի առթիվ, ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Հայկազուն արքեպս. Արա-համյանի:

Հոգևոր ճեմարանը ավարտել է 1969 թ., փայլուն հաջողությամբ, ավարտաճառ ներկայացնելով «Գիրք Սաղմոսաց»-ը և արժանանալով գերազանց գնահատականի:

1970 թ. մայիսին, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, ուղարկվել է Բուենոս Այրես (Արգենտինա)՝ իր ուսումը շարունակելու «Էլ Սալվադոր» (Ս. Փրկիչ) և «Բուենոս Այրես» համալսարաններում, հետևելով աստվածաբանության, փիլիսոփայության և հոգեբանության դասընթացներին:

Տ. Մյուռոն արեղան իր ուսման տարիներին մասնակցել է նաև Բուենոս Այրեսի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգևոր ծառայության գործին, որպես սարկավագ, և միաժամանակ դասավանդել՝ եկեղեցուն առընթեր Ս. Գրիգոր Լուսավորիչ երկրորդական վարժարանում հաշոց լեզու, Հայ Եկեղեցու պատմություն և անգլերեն:


1979 թվականին վերադարձել է Մայր Աթոռ և դեկտեմբերի 24-ին, կիրակի օրը, ձեռնադրվել կուսակրոն քահանա՝ ձեռամբ Տ. Արսեն եպս. Բերբերյանի:

Այնուհետև ուղարկվել է Ֆրանսիա՝ ծառայելու համար Փարիզի արվարձան Ի-

սի լե Մուլիանոյի հաշոց Ս. Մարիայ Աստվածածին եկեղեցում, որպես հոգևոր հովիվ:



«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է Տ. Մյուռոն վարդապետ Գըվըզյանին և ցանկանում նրան նոր հաջողություններ հովվական և ուսումնառական իր աշխատանքներում:





ՈՒՆՏԱՎՈՐՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Այս տարի ևս, Նորին Արքայապետ Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի գահակալության 26-րդ տարեդարձի տոնակատարության առթիվ, Ա. Էջմիածին և Մայր Հայրենիք էին ժամանել եկեղեցատեր ու հայրենասեր ուխտավորների բազում խմբեր սփյուռքի ամենատարբեր գաղթօջախներից, այդ թվում՝ Լիբանանից, Սիրիայից, Իրաքից, Հյուսիսային և Հարավային Ամերիկաներից, Կանադայից, Անգլիայից, Ֆրանսիայից, Եվրոպայից, Արևմտյան Գերմանիայից և Եգիպտոսից:

Ուխտավորները Մայր Աթոռ էին ժամանել՝ քերելու համար սրտարուխ իրենց մաղթանքները Մայր Աթոռ Ա. Էջմիածնի անասանություն, Հայոց Հայրապետի կենաց արևշատության, նրա նորանոր, բարի ու շինարար ծրագրերի կենսագործման և Մայր Հայրենիքի բարօրության նետագա բարգավաճման համար:

Հիշատակության արժանի է հատկապես Բեյրութի Կրոնասեր Տիկնանց Համախըմբումի 72 անդամներից բաղկացած ուխտավորների խումբը, որը Մայր Հայրենիք ժամանեց սեպտեմբերի 23-ին, չորեքշաբթի օրը, երեկոյան, գլխավորությամբ հանձնախմբի ատենապետուհի տիկին Անգինե Տանձիկյանի:

Երևանի «Զվարթնոց» օդանավակաշանոթ խմբին, հանուն Վեհափառ Հայրապետի, դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին Մայր տաճարի լուսարարպետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթրոքյանը և Ա. Հոփ-

սիմե վանքի վանահայր Տ. Մասիս վրդ. Գալստյանը:

Սեպտեմբերի 25-ին, ուրբաթ օրը, ուխտավորները, Մայր տաճարում իրենց ուխտը ու աղոթքը կատարելուց հետո, Վեհախանութ մերկարացան Վեհափառ Հայրապետին, Որբ բարեհաճեց ընդունել Կրոնասեր Տիկնանց Համախմբումի անդամներին:

Ընդունելության ժամանակ, ի դիմաց Տիկնանց Համախմբումի, Վեհափառ Հայրապետին ողջույլ ողջույնի և շնորհավորական ջերմ խոսք սասց ատենապետուհի տիկին Անգինե Տանձիկյանը և Նորին Արքայապետը հանձնեց Համախմբումի սրտարուխ նվերը՝ հայրապետական ոսկեծույլ սաս (գալազան):

Վերջում ներկաներին բարիգալատյան և օրհնության խոսք սասց Վեհափառ Հայրապետը: Նորին Արքայապետը, բարձր գնահատելով Կրոնասեր Տիկնանց եկեղեցանվեր գործունեությունը, մաղթեց, որ նրանք նույն ոգով ու եռանդով շարունակեն իրենց ծառայությունը՝ որպես մեր օրերի «անձինք նուիրեալք»:

Սեպտեմբերի 27-ին, կիրակի օրը, Վարագա Ա. Խաչի տոնին, Կրոնասեր Տիկնանց Համախմբումի անդամները երկրորդ անգամ արարողությամբ ներկա եղան ս. պատարագի արարողությանը և Հաղորդություն ստացան:

Օրվա պատարագից և Էր Անգլիայի հայրապետական պատվիրակ և հայոց սուաշ-



Հայոց Հայրապետը՝ շրջապատված Բեյրութի Կրոնասեր Տիկնանց Համախմբումի ուխտավորներով (Վեհարանի այգի, Հոբեյանական խաչքարի առաջ)

Նորդ Տ. Ներսես եպ. Պոզապայանը:
 Հաջորդ կիրակի, հոկտեմբերի 4-ին, Կրոնասեր Տիկնայք դարձյալ ներկա եղան ս. պատարագի արարողության: Օրվա պատարագին էր Գամաակոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Ոսկան ձ. վրդ. Գալբակյանը:

Հավարտ ս. պատարագի տեղի ունեցավ հոգեհանգստյան պաշտոն՝ Կրոնասեր Տիկնանց Համախմբումի հանգուցյալ անդամների հիշատակին:

Ս. պատարագից հետո վանքի միաբանական սեղանատանը, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, արվում է հալկական բանապարտով և ավանդական Կարխապով մաշկերույթ՝ ի պատիվ Կրոնասեր Տիկնանց Համախմբումի:

Մաշկերույթին ներկա էր նաև Մայր Աթոռի միաբանությունը:

Սեղանի շուրջ առաջինը խոսք ասաց Գեռագոյն Հոգևոր Նորմրդի ատենապետ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը, որը, կրկին անգամ շնորհավորելով Վեհափառ Հայրապետի գահակալության 26-րդ տարեդարձը, բաժակ բարձրացրեց Նրա բաշտողության և Մայր Աթոռի ու Հայ Եկեղեցու պայծառության համար:

Ընդունելության ժամանակ սրտի հետևյալ խոսքը կարդաց Համախմբումի նախկին ատենապետուհի տիկին Զվարթ Պոյանյանը.

«Վեհափառ Հայր,

Սրտի անհուն գոհունակությամբ, երախտագիտական բարձր զգացումներով գեղուն, Կրոնասեր Տիկնանց Համախմբումը կուգա շնորհավորել Ձերդ Վեհափառության գահակալության 26-րդ օրհնաբեր ու բարբառտիկ տարեդարձը:

Ողիկ 26 տարիներ առաջ, երբ հայ ժողովուրդը, հագիվ Հայրենական մեծ պատերազմի տառապանքի փոշին թորափած, կառուցած իր նոր և հզոր Սովետական Հայաստանով, կշանար անցյալի վերքերը դարմանել ու հայրենիքը ծաղկեցնել, գիր ու գրականություն մշակել, ահա հրաշքի համազոր Մայր Աթոռ Ս. Էջմիածինն ալ կունենար իր անգուցական Գահակալը, իր սրբազնասուրբ, իմաստուն, խոհեմ ու շինարար Հայրապետը, հանձին Ձերդ Վեհափառության:

Վեհափառ Հայր, Դուք եղաք այն օրհնյալ թթխորը, որ իրար գողեց ամբողջ հայությունը, եղաք սփյուռք-հայրենիք երկաթած «Մսկե կամուրջ»-ը, սառույց կապած սրտերն ու մտքերը հաղեցնող հրաշք նախազայթը: Եվ այսօր Ձեր հավատաշատ ժողովուրդը, հեռվին թե մոտեն, կխոնար-

նի «Մեծ Առաքյալիդ» գործունեության առջև:

Ասկե 22 տարիներ առաջ, 1959-ին, Կրոնասեր Պեյրոթ քաղաքի մեջ խոսք մը հայ տիկիներ, հայրենիք և Մայր Աթոռ գաղափարականով ոգևորված, որպես հետևորդները հայոց պատմության, «Տիկնայք փառիկատներ»-ներու, մեկտեղվեցան, ստեղծեցին Կրոնասեր Տիկնանց Համախմբումի Սիությունը, որուն միակ նպատակն ու ծրագիրն էր, զորավիզ կանգնել Վեհափառ Հայրապետիդ, աշխատել Սուրբ Էջմիածնի տաճարի և հայրենիքի եկեղեցիներու պայծառության և բարեգարգիման համար, տեղվույն պայմաններուն ներս չափով, և գիտցավ նաև պայքարիլ Ս. Էջմիածնի Գերակայության պահպանման ի խնդիր:

Արյունը, հուրը և սուրը չի կրցան մեզ ընկնել, փարսած մեր հավատքին ու գաղափարին, քաղցինք անսպասար մեր ողիեն, Լուսավորիչի Գահին գորության գիտակից: Եվ այսպես Միությունը օրեօր ալկի ընդլայնեցավ հավատարիմ ու անձնվեր անդամներով շրջապատված, եղավ «Մուսատուն կույսեր»-ու խոսք մը փառած ճրագներով պայծառացնելու համար Արագածի գագաթեն անպարսն կախված Լուսավորիչի կանթեղը:

Վեհափառ Հայր, հակառակ յոթ տարվա Լիբանանի տխուր փնակին, Սիությունը քննավ չի դադրեցավ իր գործունեութենեն, նույնիսկ արհամարհելով ոտմբը, կրակը և ավերը: Վարչություն միական և միասիրտ, բոլորված իր կորովի և անձնվեր ատենապետուհի շուրջ, տքնեցավ, անխոնջ աշխատեցավ, իր իսկ ձեռքերով կարելով և հյուսելով հարկ եղած եկեղեցական ձեռագործներն ու տարագները:

Տեղին է հիշել մեր առաջին ատենապետուհին՝ տիկին Արշալույս Այվազյանը, խոր ձերության հասած, այսօր Ամերիկայեն հոգիով մեզի հետ կապի այս պահուս:

Նույնպես մեզմե հավետ բաժնված երկու վարչական տիկիներ, տիկին Հայկուհի Թորոսյան և տիկին Զվարթ Ներսեսյան, որոնց հոգիները կապառնին մեր վերն: Անոնք ևս հոգեպես կմասնակցին մեր ցնծության:

Սիությունն նաև հարգանքով կխոնարհի հոգեւոյս Վեհափառ Սիրանուշ Պալջյանի քաղցր հիշատակին առջև: Աստվածամոր օրհնակին հետեւելով, Ան եղավ իսկապես տիպար մարերու մայրը: Բոլորս ջերմորեն վաղիված ենք Իր սերն ու բաշտվերանքը: Մեզի համար եղած է ներշնչման արքյուր, հարատևության ոգի և զոհաբերության օ-



Հայոց Հայրապետը Վեհարանի այգում՝ շրջապատված ԱՄՆ-ից ժամանած ուխտավորներով (1981 թ. հոկտեմբեր 7)

րինակ: Հարգա՞նք, խո՞ւնկ և աղո՞քք Իր անմոռաց հիշատակին:

Վեճափառ Հայր, մեր սրտագին շնորհա- կալությունները հայտնելու քառեր կապա- կին մեր շքանշանում վրա: Հա՛վատքով ու երկրորդություններ կուզանք համարելու Ձեր Սուրբ Աջը և շնորհակալ ըլլալու այն քարձք գնահատանքին և շնորհքին հա- մար, որուն արժանի տեսաք մեզ՝ Ակաաի աննելով մեր 22 տարվա միութենական գրքունեն, սթանը, հիմնադիր տասը տի- կիններն պարզկատրելով Ձեր սրբատառ կոնդակով և «Ա. Ներսես Ծնորհալի» շքա- նշանով՝ ձեռամբ Տ. Մասիս վրդ. Գալստ- յանի:

Այս սրբազան կոնդակն ու շքանշանը մեր սրբությունն է, մեր առնելուն անշեջ լու- սատու շահը, մեր զավակներուն և թոռ- հիկներուն պա՛մատ ուղեցույցը և մեր հետևորդներուն, գալիք սերունդին սեր քաշխող, ազգ ու եկեղեցի սիրցնող, հոգե- կան հրեղեն կրթողը:

Վեճափառ Հայր, այսօր, այս սրբազան պահուս, քոյրքս միակամ և միահոգի, որ- պես ուխտավոր, երկրորդություններ և հա- վատքով, ծնկադիր կաղոթներ Իջման Սուրբ Աեղանին առջև, հարձրյալեն խնդրելով, որ Ձեզ պարգևն արեւատություն:

Նոր կյանք մը ատողություններ լեցուն: Մտքի առավել զորություն, որ կարենաք իմաստություններ իրականացնել Ձեր ծրա- գիրներու շարքը:

Ձեր նոր տեղափոխությունները:

Նոր տեղերը:

Նոր կրթականները:

Որպեսզի հայ ժողովուրդը կարենա վա- չէքն ունենալ, առավել քարգավանած Մայր Հայրենիքի մեջ, Ա. Էջմիածնի հո- վանիքի տակ նշելու Ձեր «Ռսկի հոբել- յան»-ը, հիսնամյակներու տոնակատարու- թյանը»:

Մայր Աթոռի միաբանության անունից Տիկնանց Համախմբումի անդամներին ող- ջունեց Տ. Մասիս վրդ. Գալստյանը:

Այնուհետև, ի դիմաց Կրոնասեր Տիկ- նանց Համախմբումի անդամների, Վեճա- փառ Հայրապետին ուղղյալ իր հետևյալ սրտատու խոսքը կարդաց տիկին Անգինն Տաննիկյանը.

«Վեճափառ Տեր,

Գաղով տազնապալից Փյունիկի երկրեն, հավաքված ենք հոս, տոնելու համար մեր՝ սիրելի Հայրապետի զահակալության 26- ամյակը:

Թեև կու զանք փրավոր երկրե մը, բայց մեր սրտերն ու հոգիները, արդեն միշտ միասին, հիմա ֆիզիքսպես ալ կու զան

քովե-քով, ցնծությամբ ըմբռնանելու, հա- վիտենական Էջմիածնի հավերժական պա- տերուն տակ պատմական այս տարեդար- ձին հոգեկարար հրճվանքը, արտեղ, հա- վերժական Հայրատանի հոգեկան մայրա- քաղաքին, Աստուծո հավերժական տան, Ա. Էջմիածնի մեջ: Արդեն առ անասնման հրճվանք, տոն և ցնծություն է:

Հոս, մեր հոգին կվերանա, մեր արյունը կխախտա, միշտ երիտասարդ, անժամա- նակ քայց մշտանորոգ տանարի հովանիին տակ:

Ձերնագինս կշնորհակարենք Վեճափառ Հայրապետի, Իր զահակալության 26-ամ- յակին առիթով, 26-ամյակ մը, որ փաստն է Ձեր հայրատության և վկան՝ Ձեր իմաս- տության, Ձեր կորովին, կովանք՝ սպազա Ձեր հաջողություններու:

Երբ Վեճափառը, 1956-ին, տակավին երիտասարդ, հանձն առավ այս ծանր պարտականությունը, զարմամալիորեն ցու- ցաբերեց անպատելի հասունություն, կրո- նական հարցերու ներքոն հասկացողու- թյուն: Կարծեք 26 տարվան ընթացքին պատահած բոլոր դեպքերը, հարուցված բոլոր հարցերը նախապես ապրված, ընդ- ված ըլլալին Իր ներաշխարհին, Իր նե- րագիտակցության մեջ՝ կանխելով պատ- մությունը: Իսկ հիմա, 26 տարիներ կտք, մենք վկաններն ենք Իր դեռ երիտասար- դական սելունին, աշխատանքի անպատ կիրքին, ինչպես՝ կրտսերության, ետան- դին ու անաչատության:

Վեճափառ Հայրապետին նկեղեցիներու վերանորոգման սրբազան աշխատանքը քարի օրինակը հանդիսացած է: Վարչու- թյանն ու մղած, որ մեր ջանքերով և մաս- նավորաբար Իր քաջակերանքով, վերա- նորոգվի Սաանա կղզիին Ա. Առաքելոց և կեղեցին:

Եկեղեցիներու սպասներու համար պատ- րաստված ձեռագործները, շուրջամերթն և ալ զգեստները, թող ըլլան Կրոնասեր Տիկնանց Համախմբումին և անոր հավա- տավոր անդամներին համատե ցվերը Ա. Էջմիածնա տանարին, իսկ Վեճափառ Հայրապետին ձեռնված ոսկեգօծ մականը, նվիրված Իր զահակալության 26-ամյակին թող ըլլա ազնվագույն արտահայտությունը յիսնամահայտության որդիական երախ- տագիտության, սիրույն ու ճանահատան- քին:

Մեր սրտագին մաղթանքն է, որ քազ- մանան Վեճափառ Հայրապետին զահա- կալության տարիները, ու Աստուծո օրհնու- թյունը միշտ անպակաս ըլլա՝ պարգևելով Ի-

րեն անսպառ ուծ, կորով և արևաառու-
թյուն»:

Ընդունելության վերջում օրհնության Իր
խոսքն ասաց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունը կրկին անգամ բարձր
գնահատելով կրոնասեր Տիկնանց արդյու-
նաշատ գործունեությունը՝ մաղթեց, որ ջա-
րունակվի նրանց նվիրյալ ծառայությունը և
ուս իր բարի պտուղները՝ ի բարօրություն և
ի պայծառություն մեր Մայր Եկեղեցու:

Հոկտեմբերի 7-ին, չորեքշաբթի օրը, կրո-
նասեր տիկնայք հայրենական լավագույն
տպավորություններով մեկնեցին Բելրուփ:

Հայոց Հայրապետի գահակալության
տարեդարձի առիթով Մայր Աթոռ Ս. Էջ-
միածին ժամանած ուխտավորական մյուս
խմբերը ևս իրենց ուխտն ու աղոթքը կա-
տարեցին Մայր տաճարում, ներկա եղան

եկեղեցական արարողություններին, այ-
ցելեցին Վեհարան, ուր աջահամբույրով
ստացան Հայոց Հայրապետի օրհնությունը,
այցելեցին պատմական Վաղարշապատի
վանքերը՝ Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե և Ս.
Ծողակաթ, ուխտի գնացին Ս. Գեղարդի ու
Սևանի Առաքելոց վանքերը, դիտեցին
մայրաքաղաքի տեսարժան վայրերը և ասլա
լավագույն եկեղեցասիրական ու հայրե-
նասիրական տպավորություններով և հու-
շերով հրաժեշտ տվեցին Մայր Աթոռին,
Հայոց Հայրապետին ու վերադարձան ի-
րենց երկրները:

Թող ընդունական լինի ձեր բոլորիդ
ուխտն ու աղոթքը, հավատալիոր և բարի
հայ հավատացյալներ:

ԶԱՏԻԿ ԱՒԵՂԱ ԱՎԵՏԻՔՅԱՆ





ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Սեպտեմբերի 5-ին, շաբաթ.—Այսօր, երեկոյան, ուխտավորաբար Մայր Աթոռ են ժամանում Ս. Հայկազուն արդ. Նաջարյանը՝ Լոնդոնից, և Ֆրանսիայի Իսի Լե Մուլինոյի Ա. Մարիամ Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ Ս. Մյուտոն արդ. Գրվրգյանը:

Վեմախառ Հայրապետի բարեման կարգադրությամբ Ս. Հայկազուն արդ. Նաջարյանը հոգևոր անձարանից ներս հրավիրվել էր դասախոսելու կրոնական առարկաներ:

Սեպտեմբերի 6-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Ս. Նարեկ քհն. Մատարյանը և «Հայր մեր»-ից առաջ խոսում հավոր պատշաճի քարոզ:

«Ձկնի սրբոյ պատարագի» կատարվում է հոգեհանգիստ Մայր Աթոռի քարերար, նորոգ հանգուցյալ պրն. Արծրուն Ջրբաշյանի (Մարսել) հիշատակին: Այս առթիվ

Վեմախառ Հայրապետը ընդունում է հանգուցյալի կնոջը, տիկին Էլիզ Ջրբաշյանին, և միխիթարիչ խոսք ասում նրա կրամ մեծ կորստի համար:

Սեպտեմբերի 18-ին, կիրակի.—Խաչվերաց.

Այսօր Մայր տաճարում, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ս. Մյուտոն արդ. Գրվրգյանը:

«Հայր մեր»-ից առաջ գեղեցիկ և քվանդակալից քարոզ է խոսում Ս. Սիոն արքեպ. Մանուկյանը՝ «Ձի ճառ խաչին կորուսելոցն հիմարություն է, այլ փրկելոցս մեր՝ զօրոթիւն Աստուծոյ» (Ա. Կորնթ. Ա. 18) քննաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեմախառ Հայրապետը:

Նույն օրը, երեկոյան, կատարվում է «Թախիօր Խաչվերացի» ավանդական հան-

դիտությունը՝ նախագահությամբ Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանի:

* * *

Նույն օրը Վեհափառ Հայրապետին են այցելում եգիպտահայ, ֆրանսահայ և կանադահայ ուխտավորներ, որոնք Վեհափառում աջահամբույրով ստանում են Վեհափառ Հայրապետի օրհնությունը:

* * *

Սեպտեմբերի 14-ին, երկուշաբթի.—Տօն է Խաչի. Յիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը: «Զկնի սրբոյ պատարագի կատարի հոգեհանգիստ վասն համօրէն անջեցելոց»:

* * *

Սեպտեմբերի 17-ին, հինգշաբթի.—Այսօր, երեկոյան, Լոնդոնից ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ և առաջնորդ Տ. Ներսես եպ. Պոզապայանը:

Սրբազան հորը Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում դիմավորում է Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը:

* * *

Սեպտեմբերի 18-ին, ուրբաթ.—Այսօր Երևանում, հայրապետական վիլլայում, երեկոյան ժամը 17-ին, տեղի է ունենում Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստ՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի: Նիստին հրավիրվել էր նաև Տ. Ներսես եպ. Պոզապայանը, որը զեկուցում է լոնդոնահայության եկեղեցական, թեմական, մշակութային կյանքի մասին:

* * *

Նույն օրը ուխտավորաբար Մայր Աթոռ են ժամանում ԱՄՆ-ի արևելյան թեմի Հայ Եկեղեցական Դպրաց Դասի Միության մի շարք անդամներ՝ ղեկավարությամբ Ուիքսանին անհանգի Սաուր Միլոնի քաղաքի Ս. Հարություն եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Զեմոր քհն. Նալբանդյանի:

Մայր Աթոռ Ա. Էջմիածնի հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում խմբի համար կազմակերպվում է մի շարք

դասախոսություններ՝ նվիրված հայ հոգևոր և եկեղեցական երաժշտությանը և նրա զարգացման փուլերին:

Դասախոսությունները կարդում են անվանի երաժշտագետներ պրոֆ. Ռ. Աթախանը, Ա. Սարյանը, Մ. Բրուտյանը, Ա. Պարսամյանը, Մայր տաճարի երգչախմբի դիրիժոր, ՀՍՍՀ վաստ. արտիստ Խ. Մելխանեջյանը և ուրիշներ:

* * *

Սեպտեմբերի 19-ին, շաբաթ.—Այսօր, երեկոյան, Դամասկոսից ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Ոսկան Ծ. վրդ. Գալբակյանը:

* * *

Սեպտեմբերի 20-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Անանիա վրդ. Արաբաջյանը և «Հայր մեր»-ից առաջ խոսում հավուր պատշաճի քարոզ:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Նույն օրը Ս. Գայանե վանքում տեղի է ունենում քահանայական ձեռնադրություն՝ ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանի:

Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի քահանայական լսարանի չորս ուսանողներ քահանա են ձեռնադրվում:

Տ. Զարեհ քհն. Սահակյան (ավագանի անունով՝ Անդրանիկ). ծնվել է 1947 թվականին Հալեպում:

Տ. Սարգիս քհն. Տերտերյան (ավագանի անունով՝ Սերոբ). ծնվել է 1951 թվականին Էջմիածնում:

Տ. Սահակ քհն. Սահակյան (ավագանի անունով՝ Մկրտիչ). ծնվել է 1950 թվականին Ախալցխայում (Վրացական ՍՍՀ):

Տ. Հովհաննես քհն. Ծահնագարյան (ավագանի անունով՝ Հովհաննես). ծնվել է 1958 թվականին Հոկտեմբերյան քաղաքում:

Ձեռնադրությունից հետո նորընծա քահանաները, ձեռնադրիչ սրբազան հոր առաջնորդությամբ, այցելում են Վեհափառ Հայրապետին և ստանում Նորին Սուրբ Օծության հայրական խորհուրդներն ու օրհնությունը:

Նորընծա քահանաներն իրենց քահանայական քառասունքն անցկացնելու են

Մայր Աթոռում՝ Տ. Նարեկ քհն. Մատար-
յանի հոգևոր ղեկավարությամբ:

• •

Սեպտեմբերի 24-ին, ճինգչաքթի.—Այ-
սօր, երեկոյան, Արզնետինայից ուխտավո-
րաբար Մայր Աթոռ է ժամանում Հարա-
վադին Ամերիկայի հայրապետական պատ-
վիրակ և առաջնորդ Տ. Դավիթ եպ. Սա-
հակյանը:

Արթավան հորը Երևանի «Զվարթնոց»
օդանավակայանում դիմավորում է Տ. Հու-
սիկ արքեպ. Սանթրոբյանը:

• •

Սեպտեմբերի 25-ին, ուրբաթ.—Այսօր,
երեկոյան, Բաղդադից ուխտավորաբար


Մայր Աթոռ է ժամանում Իրաքի հայոց թե-
մի առաջնորդ Տ. Ավագ ծ. վրդ. Ասատուր-
յանը:


Տ. Ավագ ծ վրդ. Ասատուրյանի հետ Ի-
րաքից Մայր Աթոռի հոգևոր ճնմարանում
ուսանելու են գալիս՝ երեք պատանիներ:

• •

Սեպտեմբերի 30-ին, չորեքշաբթի.—Այ-
սօր Վեհապատ Հայրապետին են այցելում
Ֆրանսիայի Նիցցայի շրջանի մի խումբ
ուխտավորներ՝ առաջնորդությամբ տեղի
հոգևոր հովիվ Տ. Տարոն ծ. վրդ. Մերեմ-
յանի:

Ուխտավորները Վեհարանում Նորին
Արքայազան Ազր համբուրելով՝ ստանում են
Նրա օրհնությունը:





Տ Ո Ն Ք Խ Ա Չ Ի

Խաչի տոներու մեջ գլխավորն է Խաչի վերացման տոնը, զոր մյուս եկեղեցիները կտոնեն սեպտեմբեր 14-ին, իսկ մենք՝ անոր մերձավոր կիրակիին, այսինքն սեպտեմբեր 11-էն 17:

Խաչի վերացման տոնը պատմական խորքի մը վրա բանված գաղափարի մը պանծագումն է ինքնին: Եկեղեցական տարեգրությանց մեջ պատմականացած ավանդության մը համեմատ, խաչը երեք առիթներու մեջ հանդիսավորապես բարձրացուցված է ի տես հավատացելոց՝ փառավորվելով անոնցմէ: Նախ, Երուսաղեմի առաջին եպիսկոպոս Հակոբոս Տեառնեղբայր առաքյալի միջոցով, որ Քրիստոսի խաչին անանությունը ժողովրդին ցուցադրած ատեն երգած ըլլալ կավանդվի առաջին անգամ «Խաչի քո Քրիստոս, երկիրպագանեմք...» արտատուչ տաղը: Կըսենք անանությունը, վասնզի այդ միջոցին, երբ հրեից կողմէ քրիստոնէից դէմ մղված բռուն հալածանքներուն պատճառով խաչյալին անունն իսկ զգուշութեամբ և երկյուղով կարտասանէին իրենները, հնար չէր բուն խաչափայտը հանել Գողգոթայի աղբյուրներէն, որ առաջին օրէն թողվեցաւ ան, և հրապարակային պատիվներու առարկա դարձնել:

Այս ավանդությունը առ առավելն կցուցնէ թէ խաչին գաղափարը և խորհուրդը առաջին իսկ օրէն որքան մեծարելի էր դարձած քրիստոնէական զգացման:

Խաչին հանդիսավոր բարձրացման և հրապարակային փառավորութեան պատեհությունն ընծայեց անոր գլուխը Կոստան-

դիանոս կայսեր մոր Հելիենի ձեռամբ 327 թվին: Այս վերջինին կողմէ եղած առիպումներուն վրա՝ Հուդա անուն Երուսաղեմացի իրագել հրեա մը ցույց տվաւ անոր թաքուցված տեղը, ուր գտնվեցան երեք խաչեր, որոնցմէ մին փրկչականը պիտի ըլլար, իսկ մյուս երկուքը՝ երկու ավազակներունը: Ստուգելու համար առիկա, մենած պատանիի մը դին մոտեցուցին երեք խաչերուն ևս ու հասկցվեցաւ թէ երրորդը, որուն հպումովը հարություն առած էր մեռյալը, իսկական տերունի խաչափայտն էր: Այն ատեն, Կյուրեղ եպիսկոպոս, որ Երուսաղեմի հայրապետն էր, բարձրացուց զայն ի տես հավատացելոց, որոնք երկյուղածությամբ երկրպագեցին անոր: Այս եղելության պատմական հիշատակն է որ կկատարվի հոկտեմբեր 26-ի մերձավոր կիրակիին, Գլուխ խաչ անվան Աերքն, իսկ բարձրացումն և փառավորման իմաստը խառնված է բուն Խաչվերացի տոնին հետ:

Վերջապես, խաչին փառավորյալ բարձրացումն երրորդ և մեծագույն առիթն է եղած անոր գերեզարձը: Խոսքով Պարսից թագավորը՝ հունաց դէմ իր պատերազմին մեջ, 610-ին հաղթելով Հերակլի, Երուսաղեմն ալ գրավելով գերի տարաւ խաչափայտը: Հերակլ զորածողով ըրաւ և մեծ բանակով քալեց Պարսից վրա. հայկական գունդին զորավար էր Մծեծ Գևորգի, որուն միացան Պարսից հպատակ հայերն ևս: Խոսքով չարաչար հաղթվեցաւ և սպանվեցաւ իր Կավատ Օիլո որդիէն, որ անուպես հաջորդ տարին մեռնելով, իրեն հա-

չորդեց իր փնսան խոտեամբ Լեռակի օգնությամբ, որ պայման դրած էր Խաչափայտին ազատումը։ Այդ պայմանը ընդունված լինելով, 628-ին խաչը վերադարձվեցավ քրիստոնեից։ Գարսևաստանեն կարին, կարիճեն և Գոյխ և հետո մինչև Երուսաղեմ աննկարագրելի ոգևորության պատճառ եղավ անոր հանդիսական անցքը։ ամեն տեղ բարձրացվեցավ անհկա հավատացյալներու ի մխիթարություն, առարկա դառնալով ամենուն երկրորդած պաշտելության։ Կարելի է թերևս ըսել թե վերացումի այս պարագան էր նույնիսկ որ պատճառ տվավ Խաչվերացի տոնին, զոր այդ դեպքեն վերջ է որ հույներն սկսան կատարել սեպտեմբեր 14-ին։

Խաչվերացի տոնը ամենամեծ հանդիսավորությամբ կկատարվի մեր եկեղեցվո կողմե։ մասնավորապես ուշագրավ է կիրակի երեկոյի Խաչվերացի **քափոր-անդաստանը**, որ տեղի կունենա մեծ շուքով։ Լափանակամ է որ այս հանդիսավորությունը չափով մը գեթ արդյունքը լինի այն սուլավորության՝ զոր խաչափայտին գերեզարդը գործեց հայության սրտին վրա՝ Լաչաստանեն անցված միջոցին։ Կարևո դաշտին հարավ արևելյան կողմը բարձրացող լեռներուն մեծ գագաթը **Խաչափայտ կկոչվեր** մինչև վերջերը։ Այդ լեռան սարահարթին վրա, որ 9000 ոտք բարձրություն ունի, կրխի սառնորակ ջուր մը, որ նույն ատեն ուխտավայր է։

Տեղական ավանդություն մը կպատմեր թե պարսիկները խաչը հանձնելն վերջ, զղջալով, նորեն հարձակիլ փորձած են ետ անելու համար զայն. հայերը, խաչափայտը պնդունդ թողլով, իրենց ամբողջ ուժով վաճած են հարձակումը, ու վերադարձին տեսած են որ խաչին հանգչեցված տեղեն քիսած է այդ վճիտ ջուրը։ Նույն լեռներու ստորոտը կար **Խաչկա վանք** մը, որ Խաչվերացի ատեն մեծ ուխտավորություն կկատարվեր։

Խաչվերացի տոնը մեր հինգ տաղավարներեն մին լինելով, անոնց նման ունի նախընթաց պահքը, որ է յոթնյակ մը ամբողջ ինչպես **Վերափոխման** և **Վարդավաթի** տոներունը։ Ունի նաև իր **նազակատիքը**, **մեռելոցի օրը** և **յոթնօրեքը**, որուն երեք շաբթի, չորեքշաբթի և հինգշաբթի օրերը, ինչպես և նազակատիքի շաբաթ օրը եկեղեցվո տոն կկատարվին. զի խաչի և եկեղեցվո խորհուրդները էպպես մեծ տարբերություն մը չունին իրարմե, քանի որ երկուքն ալ կվերաբերին փրկագործության գաղափարին։

Խաչի երկրորդ գլխավոր տոնն է **Խաչ-**

գյուտը, զոր արդեն հիշատակած եղանք վերե, Խաչվերացի մանրամասնությանց առթիվ։

Երրորդն է **Խաչի երևման տոնը**, զոր հույներ կկատարեն մայիսի 7-ին, իսկ մենք Հիմանց Ե. կիրակիին։ Այդ տոնակատարությունը հիշատակությունն է պարգապես խաչի նշանին երկնից վրա հրաշալի երևումին, որ 351-ին տեղի ունեցավ Երուսաղեմի վրա Գողգոթայեն մինչև Զիրենցաց լեռ տարածված խաչանշան պալժատությամբ մը, որ ավելի փայլուն էր քան արևուն լույսը։ Զայն տեսան ամենքը, ժողովուրդը և կղեր, որոնք եկեղեցի փութալով գոհություն մատուցին Աստուծո, իրենց պարզեցված այս հրաշալի մխիթարության համար։ Ժամանակին Երուսաղեմի պատրիարքը, Կյուրեղ, այս առթիվ հատուկ թուղք մը գրեց Կոստանդնուպոլս Կոստանդ կայսեր, որ դատապարտված աբիտակաևությունը վերականգնելով եկեղեցվո ներքին խաղաղության դեմ մեծ վտանգ մը կպատրաստեր, և ողորջական քաղցր ոճով քայք խստադատ նկատողությամբ մատնանիչ կընեն աներ՝ իր հոր Մեծն Կոստանդիանուսի պաշտպանած դավաևության լողափառ ճշմարտությունը, միևնույն ատեն այս երևումեն ալ ապացույց մը հանել փորձելով այդ մասին։ Այդ թուղքին թարգմանությունը կկարդացվի մեր եկեղեցվո մեջ, տոնին օրը, անդաստանի ավետարանեն առաջ։

Խաչի տոներուն վերջինն է **Վարագա Խաչի** տոնը։ Նախորդ մյուս տոները հասարակաց էին բոլոր եկեղեցիներուն, այս վերջինը միայն մեզ կտոնենք. մեզի հատուկ է ան. մե՛ր խաչի տոնը, ավելի ճիշտ՝ մեր խաչին տոնն է ան, վասնզի բոլորովին ազգային հիշատակի մը պանծացումն է։

Է. դարու ճիշդ կիսուն, **Վարագա** լեռան կողերուն վրա ճգնող մեծակյաց մը, Թողիկ, գիշեր մը տեսավ տեսիլքի մեջ որ Վարագա ծայրուտ գագաթին վրա կազմված է տասներկու պունկերով տաճար մը, մեջտեղը լուսասփչու խաչով. քիչ ետքը այդ լուսավոր ձևը ինքնին փոխադրվելով դեպի վար, եկավ ամփոփվեցավ Վարագա վանքի սեղանին վրա։ Թողիկ և իր աշակերտը Հովիլ փութացին եկեղեցի և երկրպագեցին լուսափայլ մասունքին որ խաչափայտեն մասնիկ մըն էր այն անշուշտ, ինչպես առաջին վարկյանեն խորհեցան իրենք, զոր **Ս. Հոսիսիսն կոչու** և քնկերուհիները իրենց հետ ունեին այդ քարձուքին վրա ճգնած ատեննին, և զոր հոն ճգնող քահանաներու խնամքին հանձնած


Էին՝ հալածանքի հետևանքով այդ վայրերն հեռացած ատեննին: Իսկ քահանաներուն վախճանումն վերջ մասունքը անձանոթ մնացած էր իր թողված տեղը, և շատեր՝ անոր սիրով՝ հոն անցուցեր էին, ինչպես Թողիկ և Հովել, իրենց ճգնողական կյանքը, անոր հայտնությունը խնդրելով միշտ Աստուծո՛ւն: Թողիկի եղած այս անսվածային հայտնության յուրը մեծ խանդավառություն անաջ բերավ Վասպուրականի մեծ: Ժամանակին կաթողիկոսը, Ներսես Գ. Թինող մականվանյալ, փութաց Վարագ, Թեոդորոսի որդի Վարդ Ռշտունի կամ Վարդ Պատրիկ սպարապետին հետ, և հաստատելով մասունքին ստուգությունը և պատմական մանրամասնությունները, տնօրինեց որ ամեն տարի, սեպտեմբեր 28-ի մերձավոր կիրակիին, կամ Խաչվերացի տոնեն երկու շաբաթ վերջ, կատարվի Վարագա խաչի տոնախմբությունը: Թերևս այդ առթիվ ինքն իսկ հորինեց նաև «Նշանա ամենայաղթ խաչիոթ» հոգեզմայլ շարականը, որ մեր ամենեն սրտառուչ եկեղեցական երգերեն մին է և ամենեն ավելի ծողովրդականացածներեն: Ի դեպ է թերևս ավելցնել հոս թե այս տոնին կազմությունն ու հաստատումը ավելի ճիշդ պիտի լիներ քացատրել ժամանակին պատմական հանգամանքներով, որոնց մեջ հայ ծողովուրդը իր ազգային և կրոնական կյանքին համար նոր և ահեղագույն վտանգ մը կզգար: Այդ վտանգին դեմ հոգևորապես սպառազինվելու իր ճիգին հանդեսն է այս տոնը:

Վարագա Ս. Նշանի մասունքին մասին իրն պատմական լրացուցիչ տեղեկությունն ա-

վելորդ չըլլա հոս հիշել թե Թողիկի հայտնրվածը մնաց նախ Վարագա վանքի եկեղեցին մեջ. ապա փոխադրվեցավ Աերքին Վարագա կամ Ս. Նշան վանուց եկեղեցին, ուր մնաց մինչև 1021: Այդ թվականին, երբ Վասպուրականի Արծրունի թագավորն Սեանքերիմ գաղթեց Սեբաստիա, իրեն հետ տարավ խաչի մասունքը, և դրավ հոն կառուցած Ս. Նշան վանուց եկեղեցին մեջ: Բայց, իր կտակին համաձայն, իր մահեն ետքը, 1026-ին, իր մարմինն հետ Ս. Նշանն ալ փոխադրվեցավ Վարագ, ուր և մնաց մինչև 1851: Այդ տարին, Խոջաբ գավառին տիրող Սուլեյման և Չոմար փաշա անուն բռնավորներ Վարագա վանքը կողոպտելով ավագ ս. Նշանն ալ տարին իբր կողոպուտ. քայց երկուքն ալ չարաչար վախճան ունեցան. իրենց հաջորդը Իպրահիմ պեյ, տեսնելով որ այդ նվիրագործ ավարը դըժբախտությանց միայն պատճառ է եղած, ուզեց զայն հանձնել Հոգվոց վանքի վանահայր Պետրոս եպիսկոպոսի, որ պնդեց թե պետք է հանձնվի հոն ուսկից առնված է: Իպրահիմի հրամանին վրա, Վանեցիք եկան այն ատեն և առնելով սրբությունը, փոխանակ վանքի եկեղեցին՝ ավելի ապահով նկատեցին քաղաքի Ս. Տիրամայր եկեղեցին. հոն գետեղեցին գայն. այս պատճառով նույն եկեղեցին հետ այնու ըսկրապ կոչվի Ս. Նշան: Մինչև վերջերը հոն կպահվեր նվիրական մասունքը:

«Մուրքք և տոնք», Երուսաղեմ, 1980, էջ 814—828)





ԵԿԵՂԵՑՈՒ ՍՈՒՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Եկեղեցին աստվածահիմն, հոգևոր մի Հաստատություն է, հավատացյալների կազմակերպված Համայնքը, որի Հիմնադիրն ու Գլուխը Քրիստոսն է. «Երբ ի մի վայր եք ժողովվում եկեղեցում» (Ա Կորնթ. ԺԱ 18) «դու կիմանաս թե ինչպես պետք է շարժվես Աստուծու տան մեջ, որ կենդանի Աստուծու եկեղեցին է, սյուն և հաստատություն նշմարտության» (Ա Տիմոթ. Գ 15):

Ըստ Գողոս աստվածայի բացատրության, եկեղեցին Քրիստոսի մարմինն է. «Եվ Քրիստոս Գլուխ է եկեղեցու և ինքն է Փրկիչ այդ մարմնի, ...լրումը նրա, ով ամեն ինչ լրցում է ամեն ինչում» (Եփես. Ա 22, Ե 23—25, Կող. Ա 18—21): Հավատացյալները նույն մարմնի՝ եկեղեցու անդամներն են. «ինչպես մի մարմնի մեջ բազում անդամներ ունենք... այդպես և մենք, թվով շատ, մի մարմին ենք Քրիստոսով, բայց յուրաքանչյուրս միմյանց անդամ ենք» (Հռոմ. ԺԲ 4—5): «Չգիտե՞ք, թե ձեր մարմինները Քրիստոսի անդամներն են» (Ա Կորնթ 2 15). «և դուք մարմին եք Քրիստոսի և անդամներ՝ նրա անդամներից» (նույնը, ԺԲ 27):

Եկեղեցին հավատացյալների ծոցում որպես այդպիսին կատարում է երեք հիմնական առաքելություն. ուսուցողական-դաստիարակչական, խորհրդակատարողական-ծիսակաշտական և վարչական-ղեկավարման:

Այլ բացատրությամբ, եկեղեցու հիմնական երեք նկարագիրներն են. վարդապետությունը, ծիսակատարությունը և նվիրապետությունը:

Եկեղեցին իր այս երեք նկարագիրներով միջամտում է հավատացյալների կյանքի և կենցաղավարության բոլոր գլխավոր հանգրվաններին: Եկեղեցու այդ միջամտությամբ էլ հավատացյալների կրոնական-հավաքական կյանքը ստանում է խորհրդական-ծիսական նկարագիր, որը հավատացյալին փոխադրում է, բարձրացնում բնական մակարդակից դեպի մի ավելի բարձր՝ հոգևոր մի մակարդակի, եկեղեցու յոթը սուրբ խորհուրդների կատարումով, արտաքին, զգալի նշանների միջոցով, հավատացյալի կյանքի հաջորդական բոլոր հանգրվաններում:

Այսպես, կյանքի վերածնունդը՝ մկրտությամբ, կյանքի աճումը՝ դրոշմով, կյանքի սնուցումն ու զարգացումը՝ սուրբ Հաղորդությամբ, կյանքը վերանորոգելու և կատարելագործելու ճիգն ու իղձը՝ ապաշխարությամբ, կյանքի ղեկավարումն ու ներդաշնակությունը՝ ամուսնությամբ, և կյանքի վախճանը՝ հիվանդաց կարգով:

Քրիստոնյաների կազմակերպված համայնքը՝ որ եկեղեցին է, այս աշխարհի վրա ապրում է գերբնական մի ընկերության մեջ, գերազույց ճշմարտության՝ այսինքն՝ Աստուծու՝ ոգեկան այդ բարձրագույն Իրականության հետ հարաբերության մեջ: Այս դեպքում գերբնականը ուրիշ բան չէ եթե ոչ բնականը, որը բարձրացվել է, փոխակերպվել՝ բարձրագույն մի ձևի և իր վերջնական իմաստը գտել:

Քրիստոնյայի սովորական, բնական կյանքն էլ անհրաժեշտ է որ բարձրանա

հոգևոր մի մակարդակի, պայծառամալու և իմաստավորվելու համար: Հավատացյալի կյանքի այս պայծառակերպությունը իրագործվում է եկեղեցու խորհուրդների միջոցով, տեսանելի արարողություններով, զգալի, շոշափելի նյութի միջնորդությամբ: Նյութն ու ոգին, իրականությանն երկու երեսներն են, և մարդը ներդաշնակ մի ամբողջություն է կազմված նյութից (մարմին), ոգուց և պայծառացած աստվածային բանականությամբ:

Արդ, ի՞նչ է եկեղեցական խորհուրդը: Խորհուրդը, հոգևոր առումով, արտաքին, տեսանելի մի արարողություն է, նվիրական, ծիսակատարության տեսանելի մի նշանը որը հավատացյալին բերում է հոգեկան, մտավոր ու բարոյական անտեսանելի շնորհները Սուրբ Հոգու: Այլ բացատրությամբ, եկեղեցական որևէ խորհուրդ աստվածային անտեսանելի շնորհի կամ «յայտնեալ անըմբռնելի ճշմարտության» տեսանելի նշանն է, որը Սուրբ Հոգու գործությամբ հավատացյալին վրա ներգործելով, պատճառ է դառնում նրա փրկության:

Խորհրդի հունարենն է «միստերիոն», որը նշանակում է «ծածկված մի բան», իսկ լատիներենը՝ Սակրամենտում:

Կրոնների պատմության ուսումնասիրությունը ցույց է տվել որ արտաքին արարողությունները, ծիսակատարությունները օտար չեն կրոնների: Արտաքին արարողությունները կազմել են կրոնի էական ու կարևոր օրգանական մի մասը: Այս հաստատումը ճշմարիտ է մանավանդ ներքին, ոգեկան մի կրոնի համար, որ է քրիստոնեությունը: Քրիստոնեական կրոնի հոգևոր, ներքին իմաստն ու նշանակությունը անխուսափելիորեն արտահայտվում են նաև արտաքին արարողությունների և ծիսակատարությունների մեջ: Մարդկային ներքին ամեն մի մտածում էլ, ամեն մի զգացում էլ պետք է «արտահայտվի», «ասվի», «խոսվի» համակազմի դառնալու համար, եթե ոչ այն «անգործ» է մնալու, մեռած, չարտահայտված:

Մարդը կազմվել է ոգուց և նյութից: Մարդիկ ապրում են նաև արտաքին աշխարհի մեջ: Նշանակում է, նյութն էլ իր դերը ունի կրոնական, հոգևոր կյանքում: Մարդը այդ «նյութը» տանելու է իր ետևից, իրեն հետ: Աստված էլ մարդկային մարմին առավ, «որով էառ զմարմին, զհոգի և զմիտ»՝ այսինքն «մարդացավ» մարմնով աշխարհ գալու համար: Այս մտածումը ճիշտ է նաև մարդկային մարմնի համար:

Նյութը ծառան է հոգուն, մտքին ու կամքին: Մարդը իր ներքին մտածումները, զգա-

ցումները արտահայտում է իր մարմնի միջոցով, նրա շարժումներով, մարդկային տարբեր բնույթի արարքներով: Նույնն է պարագան նաև ոգեկան, իմացական, ըզգացական իրականությունների համար, որոնք կենդանի հարաբերության մեջ են մտնում մարդու հետ, արտաքին միջոցներով: Այդ իրականությունների ամբողջությունը խորհուրդն իսկ է:

Այդպիսի իրականություններ են նաև Մարդեղությունն ու եկեղեցին: Մարդեղությամբ Աստված ներկա եղավ մարդուն մեջ և մարդը՝ Աստուծու մեջ: Այս է խորհրդական սկզբունքը, որը իրականացավ Քրիստոսի Մարդեղությամբ եկեղեցու մեջ և շարունակում է իրականանալ եկեղեցական խորհուրդների միջոցով:

Հետևաբար, խորհուրդները ներքին, անտեսանելի մի իրականության արտաքին խորհրդանշաններ են:

Բնության մեջ էլ կան խորհուրդներ: Բնությունը նույնպես մի վեժն ու խորունկ խորհուրդ է, Աստուծու գոյության և գործության խորհրդանշանը, որ պատմում է Աստուծու և նրա արարչագործության մասին:

Մարդկային մարմինն էլ մի խորհուրդ է, գործող մի խորհրդանշան, փոքր մի տիեզերք՝ ինքն իր մեջ, որը արտահայտում է մեծ տիեզերքը և որպես անցք ծառայում է որպեսզի մեծ տիեզերքը մեր հոգին բանա իրեն:

Մեր մարմնի և հոգու մեջ էլ կան խորհուրդներ, դրսից՝ արտաքին աշխարհից մեզ եկած թրթռացումներ, որոնք ներգործում են մեր զգայարանների վրա և ներքին զգայություններով, ըմբռնումներով և շփումներով են արտահայտվում: Այդ թրթռացումները գործող խորհրդանշաններ են, որոնք արտաքին աշխարհի մասին պատմում են մեզ և գործելու են մղում:

Ամեն տեղ նույն աստվածային ներդաշնակությունը, այսինքն, գերբնականը ցույցանում է բնության մեջ և բնությունը գեղեցկանում, իմաստավորվում է գերբնության մեջ: Նյութը կատարում է իր ծառայի դերը հոգու և հոգեկանի նկատմամբ: Այլ խոսքով արտահայտված, նյութը, արտաքին արարողությունների և ծիսակատարությունների ամբողջությունը մի սանդուղ է, մի անդրուվար, որից Աստված իջնում է մարդու մեջ: Առանց խորհուրդների եկեղեցին չի կարող ապրել: Եկեղեցին արտահայտվում է նաև ծիսակատարում:

Նույն ներդաշնակությունը նաև մարդկային սովորական կյանքում, ուր կան հոգեկան իրականություններ, որոնք կենդա-

նի շփման մեջ են մարդու հետ, ճանաչվում են մարդու կողմից, ազդում նրա վրա, և նրան միացնում այդ իրականությունների հետ, կապում մարդկային արտաքին միջոցներով:

Աստված ինքն իրեն մասնավոր հարաբերության մեջ դրեց մարդուն հետ, ինքն իրեն հայտնեց և բաշխեց Մարդկությանը ու իր հաստատած եկեղեցիով որ Քրիստոսի մարմինն է: Եկեղեցին Մարդկության շարունակությունն է:

Այսպես կան նաև հոգեկան իրականություններ ընտանեկան կյանքում, որոնք արտահայտվում են, թանձրանում, մարմին առնում ծնողների խնամքին, զավակների հրճազանդության, ամուսինների փոխադարձ գործադրանքին մեջ: Ընտանեկան հարկի ներքո ծնած ու հասակ առնող մանուկը միշտ շփման մեջ է այդ կենդանի իրականությունների հետ և աշխատում է իրագործել դրանք: Կան դպրոցական հոգեկան իրականություններ, ինչպիսիք են կարգապահությունը, օրենքի ոգին, հեղինակության սկզբունքը: Ոգեկան այդ իրականությունները մարմին են առնում դպրոցում, տեսչի, դասախոսական կազմի և դպրոցական կանոնների մեջ:

Կան նաև ազգային, ոգեկան իրականություններ, ինչպիսիք են մի ազգի միության և հանձնարի ոգին, որոնք արտահայտվում են նույն ազգի զավակների ստեղծագործություններում և ազգային պատմության եղելությունների մեջ: Մի որևէ ազգի զավակ ամեն օր այդ եղելությունների և ըստեղծագործությունների ճանաչումով բացվում է իր ազգի պատմության, հանձնարին և ոգուն:

Եթե այսպես է և՛ բնության և՛ մարդկային պատմության մեջ, ուր հոգեկանը արտահայտություն է գտնում **նյութականի** մեջ, գերազանցապես պարագան այդպիսին է նաև կրոնական կյանքում, ուր խրճիկ է ոչ թե **բնական-հոգեկանին**, այլ **գերբնական-հոգեկանին** հետ հարաբերության մեջ մտնելը, և եթե անհրաժեշտ են խորհրդանշանները բացատրելու համար բնական-հոգեկանը, գերբնական-հոգեկանն էլ բացատրելու համար կարիք կա խորհրդանշանների, որոնք եկեղեցու սուրբ խորհուրդներն են:

Ահա այսպիսի կապ, աղերս գոյություն ունի Աստուծո՛ւ՝ այսինքն հոգեկան բարձրագույն իրականության և մարդու միջև:

Մեծագույն կապը Աստուծու և մարդու հարաբերության մեջ ինքը՝ Քրիստոսն է, որ իր մարմինն ու հոգին էլ ի գործ դրեց արտահայտելու **աստվածայինը**, հաստատեց

իր եկեղեցին, որը իր մարմնի և հոգու երկարաձգումն է տեսանելի մի **ընկերության**՝ այսինքն եկեղեցու մեջ, որտեղ հոգեկան կյանքը խարսխվում է **զգալի իրականությունների** վրա, բարձրաձայն համար Աստուծուն: Այդ զգալի իրականությունները եկեղեցու յոթ խորհուրդներն են, Մկրտությունը, Դրոշմը, Ապաշխարությունը, Հարդրությունը, Չեղանդությունը, Ամուսնությունը և Կարգ Հիվանդացը: Խորհուրդների միջոցով վերականգնվում է **աստվածայինը** հավատացյալի մեջ, պայծառակերպվում է նա Աստուծու լույսին մեջ:

Որևէ խորհուրդ կատարելու համար անհրաժեշտ են երեք պայմաններ, **նյութը, ձևը և խորհրդակատար պաշտոնյա** (քահանա կամ եպիսկոպոս): Նյութը՝ խորհուրդների կատարման ընթացքում գործածված, արտաքին, զգալի, շոշափելի և տեսանելի առարկան է, օրինակ, մկրտության ժամանակ՝ ջուրը, դրոշմի՝ մեղոն, սուրբ Հարդրության ժամանակ՝ պատարագի հացն ու գինին:

Նյութը ինքնին որևէ գերբնական գործություն չունի, այն որպես շնորհի նշան և խողովակ հաստատվել է Քրիստոսի կողմից: Քրիստոսի կամքով որևէ առարկա կարող է լինել միջոց շնորհի տվչության:

Ձևը խորհուրդի կատարման ընթացքում սահմանված ու նվիրականացած աղոթքներն են ու բանաձևերը, օրինակ, մկրտության ժամանակ քահանայի հետևյալ հայտարարությունը. «Ծառաս մկրտի յանուն Հօր, և Որդույ և Հոգույն Սրբոյ»:

Աղոթքը, քանաձևը միանում է նյութին, և ստեղծվում է խորհուրդը, իսկ խորհուրդի **պաշտոնյան** քահանան կամ եպիսկոպոսը **ձեռնադրյալ** և օձյալ այն օրինավոր և իրավասու անձն է, որը գործածելով խորհուրդների **նյութն** ու **ձևը** կատարում է բուն խորհուրդը: Չեղանդության խորհրդով շեշտվում է եկեղեցու պաշտոնեության անհրաժեշտությունն ու կարևորությունը: Միսակատար քահանան մատակարարն է՝ աստվածային խորհուրդների: Խորհուրդների կատարումը հավատքի հրապարակային ու գործնական քարոզն է, խոստովանությունը և հավատացյալների քրիստոնեական դաստիարակությունը Ավետարանի գաղափարների լույսի տակ, ստեղծելու համար նոր մի աշխարհ և մի նոր մարդկություն:

Եկեղեցու յոթ խորհուրդների մեջ այս իմաստով **ձեռնադրությունը** կամ «կարգի խորհուրդը» ամենակարևոր խորհուրդն է, որից և կախում ունի մյուս խորհուրդների կատարումը: Խորհուրդների կատարման

մեջ բուն խորհրդակատարը ինքը Քրիստոսն է: Նրա պաշտոնը փոխանորդաբար կատարում է քահանան:

Ամեն խորհուրդ կամավոր նվիրում է Աստծուն: Քրիստոս անձամբ հավատացյալը նվիրում է Աստուծու, և Աստված՝ ընդունելով այդ կամավոր նվիրումը, հավատացյալի հոգևոր, բարոյական և նյութական կարիքների համաձայն, տալիս է իր շնորհները:

Մկրտությունն ու Ապաշխարությունը կոչվում են մահվան կամ մեռելոց խորհուրդներ, որովհետև դրանք հոգեպես մեռածներին սրբացնող շնորհների միջոցով հոգևոր կյանք են պարգևում: Մյուս հինգ խորհուրդները կոչվում են կյանքի կամ կենդանության խորհուրդներ, որովհետև դրանք միշտ հոգեպես առողջ են պահում հավատացյալներին:

Մկրտությունը, դրոշմը, ապաշխարությունն ու սուրբ հաղորդությունը հրամայական պարտականություններ են յուրաքանչյուր հավատացյալի համար: Ամեն քրիստոնյա անհրաժեշտորեն պետք է ենթարկվի այդ չորս խորհուրդների կատարմանը:

Ձեռնադրությունն ու ամուսնությունը կամավոր խորհուրդներ են, իսկ կարգ հիվանդացող մեր եկեղեցու ըմբռնումով պատահական խորհուրդ է համարվում:

Յոթը խորհուրդներից մկրտությունը մեկ է, այսինքն քրիստոնյան միայն մեկ անգամ պետք է մկրտվի, ազատվելով սկզբնական, աղամական և անձնական մեղքերից, անդամ դառնալով քրիստոնեական մեծ ընտանիքին որ է եկեղեցին: Այդ իմաստով էլ մկրտությունը անկրկնելի է: Նույնպես և դրոշմը: Ապաշխարության և հաղորդության խորհուրդները կրկնելի են: Ամուսնությունը՝ անկրկնելի: Ամուսնությունը կրկնվում է այն դեպքում միայն երբ ամուսիններից մեկ կամ մյուսը մահանում է:

Ձեռնադրությունը կամավոր խորհուրդ է և անկրկնելի: Կարգ հիվանդացող, որը կատարվում է հիվանդների համար կրկնելի է: Հայ եկեղեցին սույն խորհրդի կատարման ընթացքում շեշտը դնում է աղոթքի և հաղորդության և ոչ թե օծման վրա: Հայ եկեղեցին վերջին օծումը միացրել է առաջին օծման խորհրդի հետ, որ է դրոշմը:

Խորհուրդները իբրև միջոց աստվածային անտեսանելի շնորհների ստացմանը, արդյունավոր և օգտակար լինելու համար պետք է կատարվեն հավատքով ու երկյուղածությամբ, հոգևոր, մտավոր նախապատրաստությամբ, ազատ կամքով: Որևէ խորհրդի ընդունելության համար անհրաժեշտ է լրացումը արտաքին և ներքին այն պայմանների, որը պահանջում են խորհուրդի էությունն ու քնությունը:

Խորհուրդների հավատքով ու երկյուղածությամբ կատարումի դեպքում միայն հավատացյալների հոգիներում դրոշմվում է՝ ոգեկան մի որոշ ճշան որը կոչվում է քրիստոնեական նկարագիր: Այդ նկարագիրը անցնում է հավատքը, բարեպաշտությունը, սրբացում է հոգին, և մարդը պատրաստում է երկնքի և հավիտենության համար:

Ամեն հավատացյալ հոգի ձգտում է դեպի կատարելություն, դեպի գերագույն իրականությունն ու ճշմարտությունը՝ որ է Աստված, եկեղեցու խորհուրդների միջոցով, կյանքի բոլոր հանգրվանների վրա:

Այս երկրի վրա, խորհուրդների միջոցով զանազան քրիստոնեական համայնքներ, երկրներ ու ժողովուրդներ, իրար են միանում, ու կազմում համամարդկային այն մեծ միությունը, որ քրիստոնեական եկեղեցին է:

Եկեղեցու խորհուրդները այդ անտեսանելի բայց ցանկալի միության կապերն են հանդիսանում, որոնք միմյանց են կապում՝ հոգիներն ու ըմբռնումները, հոգեբանություններն ու ցանկությունները ժողովուրդների:

Քրիստոսի եկեղեցին իր խորհուրդների միջոցով իրականացնում է այս երկրի վրա Աստծու տիեզերական հայրության և մարդկանց եղբայրության համբուրելի գաղափարները:

Իսկ հայ քրիստոնյան, այս մտածումների և գաղափարների յուսի տակ պետք է գնահատի մեր եկեղեցու խորհուրդների հոգևոր արժեքները, մեր եկեղեցական, ազգային, ընտանեկան, դպրոցական ու անհատական կյանքից ներս:

Ս. Հ.



ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՅՈՒՆԵՑԻՆ ԵՎ ՈՐ «ԱԴԱՍԳԻՐՔԸ»

Միջնադարյան Հայաստանի ամենաբեղմնավոր մշակութային գործիչներից է ԺԴ—ԺԵ դդ. քանաստեղծ, քերական, աստվածաբան-իմաստասեր, մանկավարժ, երաժիշտ-երգահան, ականավոր հոգևորական Առաքել Սյունեցին: Նրա մասին կենսագրական սակավ տեղեկություններ են հայտնի քանասիրությանը: Ծնվել է մոտավորապես 1355 թվականին, աշակերտել է իր քեռուն՝ մեծ գիտնական-մտածող Գրիգոր վարդապետ Տաթևացուն, որը վճռական ազդեցություն է գործել Առաքելի աշխարհայացքի կազմավորման և նրա ամբողջ գործունեության վրա:

1401-ին Սյունեցին եպիսկոպոս էր, այնուհետև՝ Սյունիքի միտրոպոլիտ: 1401—1403 թթ. գրել է «Աղանգիրք» ծավալուն քերթվածը, որի երևք տարբերակները հայտնի են հայագիտությանը. բացառիկ երևույթ միջնադարի հայ իրավանդության համար, որով մենք հնարավորություն ենք ստանում հետևելու հեղինակի ստեղծագործական աշխատանքի սկզբունքներին:

Գիտական ու գրական գործունեությանը զուգընթաց Առաքել Սյունեցին հանդես է եկել նաև իրրև գրիչ ու ծաղկող: Նա ժամանակի համար ամենաբարձր կրթություն էր ստացել, սովորելով Տաթևի համալսարանում, որտեղ հետագայում ծավալեց լայն հոգևոր-մշակութային, գիտամանկավարժական գործունեություն: Սյունեցին վախճանվել է 1425 թ., թաղվել Եղեգնաձորի Ծատիկ անապատում:

Ե՛վ ժամանակի, և՛ հետագա դարերի

մատենագիրները սիրով են հիշել Սյունեցուն, անվանելով նրան ճննդամիտ երգարան, եռամեծ հոնտոր, այր սուրբ, գերիմաստ և չքնադարարոզ վարժապետ, հոգևորոզ հայրապետ, հզոր փիլիսոփա և աշխ: Նրա բազմաթիվ քարոզները, ճաները, քերականական, իմաստասիրական, մանկավարժական երկերը, քանաստեղծություններն ու պոեմները պահպանվել են հարյուրավոր գրչագրերում, ունեցել մի շարք հրատարակություններ՝ սկսած ԺԸ դարից:

Առանձնահատուկ է Առաքել Սյունեցու տեղը նաև հայոց միջնադարյան երաժշտական արվեստի պատմության մեջ. ինչպես իր տաղերով, նույնպես և երաժշտության տեսության ու գեղագիտության հարցերին վերաբերող մի շարք դրույթներով, միջնադարի հոգևոր և աշխարհիկ երաժշտության մասին հաղորդած եզակի տեղեկություններով¹:

«Լուծմունք յաղագս Սահմանացն Դարթի Անըաթթ փիլիսոփայի» մեծածավալ իմաստասիրական աշխատությունը բավական ամբողջական պատկերացում է տալիս Սյունեցու փիլիսոփայական հայացքների մասին: Նա հիմնականում հետևել է իր ուսուցչապետ Գրիգոր Տաթևացուն, մասնավորապես իմացաբանության հարցերում զարգացրել նրա գաղափարները: Առաքել

¹ Տե՛ս Ե. Քանթիզյան, Ներդաշնակության հենքի մասին ուսմունքը Հայաստանում միջին դարերում (Ժ—ԺԵ դդ.). «Բաների Մատենադարանի», 8, Երևան, 1967, էջ 104:

Սյունեցիներն համարվում է ժԵ—ժԶ դարերի հայ փիլիսոփայության խոշորագույն դեմքը²։

Կարևոր ներդրում ունի Սյունեցիներն նաև քերականական արվեստի բնագավառում։ «Յադագս քերականության համառոտ դոմմունք» աշխատությանը նա լեզվաքերականական առանձին հարցեր բնագրելիս նկատելի նվաճումներ է արձանագրել³։ Առհասարակ մեծ տեղ է հատկացնում նա քերականության ուսուցմանը, այն համարելով բոլոր իմացությունների սկիզբ և նախադրոտ։

Հայոց լեզվի ուսուցման և ընդհանրապես դաստիարակության հարցերը նույնպես զբաղեցրել են նրան։ Գրիգոր Տաթևացու և Առաքել Սյունեցու «Սահմանադրություն դաստիարակության նորածնեալ մանկանց» աշխատությունը դիտվում է իր-րև միջնադարի հայ մանկավարժական գրականության ամենաարժեքավոր հուշարձաններից մեկը։

Առաքել Սյունեցու ժառանգության կարևորագույն բաժինը, սակայն, գեղարվեստական ստեղծագործությունն է անտարակույս։ Նա գրել է քնարական, ուսուցողական ու խրատական բանաստեղծություններ, երկարաշունչ բանքեր ու քերթվածներ, որոնց մեջ ոչ միայն բացահայտվել է նրա գրական անհատականությունը, այլև լիովին արտահայտվել են հեղինակի գեղագիտական, իմաստասիրական ու բարոյագիտական ըմբռնումները, դիրքորոշումը դարաշրջանի հրատապ հարցերի նկատմամբ։

Առաքել Սյունեցիներն քանաստեղծություններ է գրել այլևայլ նյութերի շուրջը, այդ թվում նաև՝ երկնային մարմինների մասին։ Բազմաթիվ բանքեր է նվիրել Քրիստոսին, Աստվածածնին ու սրբերին։ Բանաստեղծին թերևս ամենից ավելի բնորոշ է ազգային-կրոնական ավանդությունների մշակման հակումը։ Մասնավորապես հայ պատմիչներից նա վերցրել և մշակել է Հակոբ Մծբնացուն, Գրիգոր Լուսավորչին վերաբերող պատումները, հաճախակի է անդրադարձել «Երգ երգոցին»։ Վերջինիս հետ առնչվող գործերի մեջ լավագույններից է «Առ ճշմարիտ բաղձալին Քրիստոս»

քերթվածը, որտեղ ակնհայտորեն երևում են հեղինակի գրական վարպետությունն ու ձիրքը։

Տասնյակ ոտանավորներ է գրել բանաստեղծը, ուր խոսվում է հանդերձյալ աշխարհի, անմեղների ու մեղավորների, վերջին դատաստանի մասին։ Նկարագրելով արդարների երանավես և մեղավորների դժնի վիճակը դատաստանից հետո, հեղինակը հորդորում է մարդկանց՝ բարի գործեր կատարել, չշեղվել ընդունված բարոյականության սկզբունքներից։ Այստեղ լավագույններից է «Վասն փառաց սրբոց» բանաստեղծությունը, որ գրված է արվեստագետի վառ երևակայությամբ և աչքի է ընկնում գունագեղ պատկերներով։

Սյունեցու խրատականները անհամեմատ բազմազան են և բավական հստակ պատկերացում են տալիս նրա ժամանակակիցների վարքի, կենցաղավարության մասին։ Այստեղ առատ են մարդկային ապրումների, հոգեբանության, կյանքի ու կենցաղի վերաբերյալ դիտողությունները։ Հեղինակը նշավակում է իր օրերում գոյություն ունեցող չարիքները, արատներն ու մեղքերը. կաշատակերություն, շողոքորոտություն, խաբեություն, վաշխ, գերեվարություն, ստրուկների վաճառք, ծեծ և այլն։ Այդպիսով բանաստեղծը ամբողջացնում է ժամանակի պատկերը, թերևս ավելի, քան իր ժամանակակիցներից որևէ մեկը իր ստեղծագործության մեջ։

Թե՛ բանաստեղծություններում, թե՛ քանքերում տրվող խրատները կապվում են ամենից առաջ քրիստոնեական բարեպաշտության հետ, բայց դրանց մեծ մասը վերաբերում է նաև բարեկրթությանն առհասարակ։ Եվ պետականություն չունեցող մի ժողովրդի համար ամենևին անկարևոր չէին հավատի ու բարոյականության հարցերը։ Չէ՞ որ հայ ժողովրդի փրկության վերջին կովանն էր Հայ առաքելական եկեղեցին։

Առաքել Սյունեցու գործունեությանն ընդհանրապես բնորոշ է ժողովրդին արժանապատվության զգացումով տոգորելու, ինքնագիտակցությամբ ոգեակնելու, նրա մեջ ազգային հպարտություն արթնացնելու ձգտումը։ Հայոց պատմության, լեզվի ու մշակույթի զանազան հարցերի առնչությամբ նա մի շարք ուշագրավ դիտումներ ունի կատարած։ Այս տեսակետից ևս հետաքրքիր են Գրիգոր Լուսավորչին, Գրիգոր Նարեկացուն նվիրված բանքերը։

Հատկապես Գրիգոր Նարեկացին հոգեհարազատ էր Առաքել Սյունեցուն, ինչպես Ներսես Ծնորհալին, որը խոր ազդեցություն է թողել նրա վրա։ «Անձինք Նարե-

² Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հտ. IV, Երևան, 1972, էջ 462—463. С. Аревшатян, Философские взгляды Григора Татеваци, Ереван, 1957, էջ 25, 87։

³ Տե՛ս Գ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (Ե—ԺԵ դդ.), Երևան, 1954, 282 և հաջորդ էջերը։

կացույն» քանաստեղծության մեջ, որն, ի դեպ, միջնադարում լայն տարածում ունեցավ, Սյունեցիքն ոչ միայն իր զգացմունքներն է արտահայտել մեծ քանաստեղծի նկատմամբ, այլև բարձր է գնահատել նրա ստեղծագործությունը, հիանալով նրա արվեստի շուրջով ու վեհությամբ, Ռոբերգոսյան մատյանը քննությամբ հրապարակելով տալիս Արամին, //Ազգանագեան Հայկայ զարմին» (քանատողն ունի նաև հետևյալ տարբերակը. «Ազգանագեան Հայկ Արամեհին». տևս «Քերթվածներ, էջ 303, հմմտ. «Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատենագրութիւն» Տփլիս, 1905, էջ 367):

Սյունեցու խոհերն ու զգացմունքները, որ արտահայտվեցին ու վերարծարվեցին քանաստեղծություններում, իրենց առավել բարձր մարմնավորումն ստացան նրա ծավալուն երկերում: Խրատական քանաստեղծությունները, «Վասն դատաստանի», «Վասն նախնեացն Ադամայ և կնոջն», «Վասն հոգեվարի» և մյուս բանքերը շատ բանով հիշեցնում են նրա պոեմները, մասնավորապես՝ «Ադամգիրքը», ուստի վերջինս տարբերակների հետ կարող են նպաստել նրա ստեղծագործական պատմությանը հետևելուն:

Բոլոր այս գործերը արդիական խնդիրներ են քննարկել և այդ առումով կարելի է ասել, թե ունեցել են հասարակական հնչելություն: Միջնադարյան մարդուն շատ են հուզել կրոնի ու բարոյականության հարցերը՝ կապված մարդու լինելության խորհրդի, ներկայի ու ապագայի հետ: Բնական է, որ Առաքել Սյունեցիքն շոշափում էր գլխավորապես այդ ոլորտին վերաբերող խնդիրներ. դրանք եղել են նրա գեղարվեստական ստեղծագործության առանցքը, գեղագիտական որոնումների առարկան:

Քանաստեղծին զբաղեցնող հիմնական հարցերից մեկն այն էր, թե ինչպե՛ս պիտի վերագտնի մարդն իր կորցրած դրախտը, երջանկությունը: Ի՞նչը կփրկի աղամորդուն այս աշխարհի անուրախ կյանքից: 2է՝ որ նա արժանի է լավագույն փիճակի: Եվ քանաստեղծը մատնանշում է այն ուղին, որով մարդկությունը կարող է վերագտնել կորցրած երջանիկ ու ներդաշնակ կյանքը:

Բնականաբար քննարկվող հարցերը Սյունեցիքն կապելու էր հայ ժողովրդի անկատարի հետ: Դրախտը, որից զրկվել է մարդկությունը, Աստվածաշունչի հավատամամբ, բնդարկել է նաև Հայաստանը, որի անմախսանելի, անմխիթար փիճակի ակա-

նատեղը, վիան էր քանաստեղծը: Մարդկության տխուր ներկան Սյունեցիքն գիտակցել և ներկայացրել է՝ աչքի առաջ ունենալով իր ժողովրդի ու հայրենիքի կյանքը և կեցությունը:

Նրա գործունեության շրջանում Հայաստանում, ինչպես հայտնի է, անկայուն քաղաքական դրություն էր տիրում: Մեծ աղետ էին հատկապես Լեւոն-Թեմուրի արշավանքները: Բայց քաղաքական անկումին սպառնում էր հետևել և հոգևորը: Փրյուզվում էր ժողովրդի վերջին ապավենը: Դարաշրջանի գլխավոր հարցը շարունակում էր մնալ ազգապահպանման խնդիրը: Իս էր ժամանակի հայ մտավոր գործիչների, այդ թվում՝ Առաքել Սյունեցու գլխավոր մտահոգությունը: Քանաստեղծը ցավով էր հետևում մոռող ասպատակողի ավերմունքներին և չափածո մի հիշատակարանում գրել է նրա մասին.

Անդամալուծ էր և տկար,
Զօրք ունէր ուր հարիր հազար,
Զաշխարհս էառ հրգօրաբար,
Ո՛չ որ նրմա ընդդիմանայր:

Քաղաքական ինքնուրույնության կորուստը ԺԴ—ԺԵ դարերում կասեցրեց երկրի հոգևոր, տնտեսական ու մշակութային առաջընթացը: Հասարակական կյանքի աշդպիսի պայմանները սովորաբար ողնկցվում են ժողովրդի հուսալքումով և քարոյական քայքայումով: Անհետանկար, քարոյալիք փիճակ, անկումային տրամադրություններ, քրիստոնեական գաղափարաբանությանը խորթ ապրե՛լա՛լ կերպ, այն ամենը, որ նշանավոր մատենագիրը համարում էր հոգու վտանգավոր հիվանդություն, — տիրապետող էին Հայաստանում և անհանգստացնում էին նրան: Իրոժումն այդ հիվանդություններից, հավասարակական չարիքներից՝ առաջին, անհրաժեշտ քայլն էր երջանկության դրախտի ճանապարհին: Այդ տեսակետից հետաքրքիր է «Բանք խրատականը և յոյժ հարկատրք, որք քակտեն զխորհուրդ մարմնական և տան ուրանալ զսնտի խաբեթին աշխարհիս, և այլ իմն շինեն ըզխորհուրդ մարդկան» ծավալուն քնարական քերթվածը, որ քանաստեղծի մեջ հայտնի է «Դրախտագիրք» անունով:

«Դրախտագրքի» սկզբում, որը մի տեսակ նախադրություն է, հեղինակը տարբերակում է յոթ տեսակ դրախտ. Ադամի դրախտը, Աստվածաշունչը, հոգիների դրախտը, Վերին Երուսաղեմը և այլն:

Սույն թվարկման մեջ առաջինը Ադամա

դրախտն է, որ պատկերված է «Աղամզըրքում»։ «Դրախտագիրքն» սկսվում է Աստվածաշունչ-դրախտի գովքով, որը հեղինակի հորդորն է՝ ուսումնասիրելու այն։ Այս խոսվում է հանդերձյալ կյանքի մասին. սա հակադրվում է այս քաղաքին և հայտաբերում բազում առավելություններ։ Այնտեղ չարչարում, պարսավում են չարագործներին, անօրեններին, մեծարում սուրբ ու արդար մարդկանց։ Հեղինակը խոսք ուղղում է բազմաչարչար աշխատավորին, որ տանջվում է այս կյանքում.

- Որքան յայդ գեղըդ կու կենաս՝
յօտար կոռի ես.
- Յայն քաղաքին անհոգ կացիր,
այլ կոռ չըկայ քեզ։ (82)
- Յայդ գեղդ զըրկողքն և կողոպտողքն
կու նեղացնեն զքեզ,
- Յայն քաղաքին որքան կենաս,
ոչ ով չխօսի ընդ քեզ։ (83)

Այս կյանքում չարերը, ուժեղները, անօրենները, գողերն ու ավազակները ամենուր ճնշում, նեղում, հարստաճարում են իրենց պատկերակցներին, կանոնավոր մարդկանց, իսկ այնտեղ, «այն քաղաքում», աշխատի անարդարություններ չկան, ամեն ոք վարձատրվում է իր արժանիքներին համապատասխան և կամ պատիժ կրում ըստ հանցանքի մեծության։ Ներկա դժոխային կյանքին հակադրվում է սպասվող երանությունը։ Հակադրությունների առաջին մասը միշտ լինում է կյանքի անմիջական արտապատկերումը, երկրորդը առավելաբար երևակայական է, թեպետ այստեղ ևս նշմարելի են իրական կյանքի արձագանքները։

«Դրախտագրքում» նույնպես Սյունեցին ստեղծել է վերջին դատաստանի տեսարանը, որ կոչված էր պթափեցնելու ընթերցողին, զգաստացնելու, նորից ու նորից հորդորելով բարեգործության ու ծուծկալության։ Բանաստեղծն ուսուցանում է, թե ահեղ դատաստանից հետո հանդերձյալ աշխարհում երկու վիճակ կա. ամանց փառք ու հրճվանք՝ արդարների, սրբերի, մարտիրոսների, ճգնավորների, և հավիտենական տանջանքներ՝ ըստ հանցանքի ծանրության դատապարտված մեղավորների համար։ Ընդ որում, դժոխքի գլխավոր պատիժը անույս կրակն է։

«Դրախտագրքի» քնարական բերու-հեղինակը, իբրև մի Վիրգիլիոս, առաջնորդում է ընթերցողին «այն քաղաքը», անդրշիրիմյան ճանապարհորդության։ Հեղինակի խորհուրդը դարձյալ նույնն է. եթե ուզում եք հավիտենական փառքի արժա-

նանալ, հետո մնացեք աշխարհային սին գայթակղություններից։

Ապրողներին դիմառնաբար խորհուրդներ են տալիս նաև մեռյալները։ Նրանք զղջացել են արդեն, ափսոսում են իրենց արարքների համար և սովորեցնում են, թե հարկավոր է այլ կերպ ապրել, լինել սակավասկետ, չափավոր, պարկեշտ ու այլատեր, պետք է պթափվել, հրաժարվել անհոգ ու անբան կյանքից, որ՝

- Ջինչ բան որ մեզ հանդիպեցա,
թող չհանդիպի ձեզ.
- Բացեք ըզդուռն սըրտից մըտաց
ի՛ ականջ դըրեք մեզ։ (156)

Այս բարատնությունն օգնել է հեղինակին՝ խոսքն ազդու ու համոզիչ հնչեցնելու նրանց բերանով, որ սխալվել ու այժմ զղջում են։ Հանգուցյալները խրատ-խորհուրդներից բացի ողջերին դիմում են նաև խնդրանքով՝ հարգելու իրենց հիշատակը։ Նրանց համար ցանկալի է, որ սերունդները հիշեն իրենց և ինչ-ինչ պարտականություններ կատարեն անտրտուն, առանց ծուլանալու։ Սերունդների հիշողության մեջ ապրելը փաստորեն մարդու երկրային կյանքի շարունակությունն է, հավիտենական կյանքը, որոնեղին, դրախտը։

Հետաքրքիր է, որ Ի. Վ. Գյոթեն իր «Դրախտագրքում» («Արևմտա-արևելյան դիվանում») մոտավորապես նույն պատկերացումն է արտահայտել։ Սակայն, եթե Սյունեցու ըմբռնմամբ սերունդների հիշողության մեջ կարող է ապրել յուրաքանչյուր մահկանացուն, իր արժանապատվությանը և արդարացի է ապրել, իր հերթին հարգել է նախնիների հիշատակը, ապա Գյոթեն այդ պատիվը վերապահում է միմիայն ընտրյալներին.

- Եթե եղեմին արժանացել ես՝
Հերոս ես,—բայց ի՞նչ ես արել...՝

Առաքել Սյունեցու «Դրախտագիրքը» առանձնակի արժեք ունի այն առումով, որ բանաստեղծը Նարեկից հետո գտալ ծավալուն քնարական քերթվածի կառուցման նոր միջոց՝ անդրշիրիմյան ճանապարհորդության մտածումը։

Պակաս կարևոր չէ նաև կապը «Աղամզրքի» հետ։ Ինչպես նկատել է Հ. Ն. Տեր-Ներսեսյանը, «Դրախտագիրքը» «իր գաղափարաբանությամբ, բարտևական շարադրությամբ և ստեղծագործական հան-

՝ Иоганн Вольфганг Гете, Собрание сочинений в десяти томах, т. первый, М., 1975, стр. 411.

գամանքով՝ շատ մեծ նմանություն և աղերս ունի «Աղամզիրի» հետ, որուն շարունակությունն է՝ կարծես երկրավոր դրախտեն արտաքսված մարդկությունը առաջնորդելու դեպի անդրաշխարհի երկնավոր դրախտը՝:

«Աղամզիրը» Սյունեցու քանաստեղծական ժառանգության նոր, առավել բարձր նվաճումն էր, առհասարակ նրա ստեղծագործության պատկը: Դա նվաճում էր նաև ընդհանրապես հայ գրականության համար:

Այստեղ, ի տարբերություն «Իրախտագրի», նյութը վերացական չէ, ընդհակառակն, պլոմեն, փիպական տարրը, տրամախոսություններն ու մեմախոսությունները, տարբեր կարգի նկարագրությունները, պատկերները ցույց են տալիս, որ քանաստեղծը վերացական գաղափարներ տարփողելուց բացի, գուցե և ավելի, կարողանում էր պատկերել ու ներկայացնել թանձրացականը, և դա՝ ոչ միայն իրապաշտ մտածելակերպի, այլև քանաստեղծական անուրանալի ձիրքի շնորհիվ: Ուշագրավ է, որ ամենաուրբ աստվածաբանական մտածություններն անգամ նրա գրչի տակ շեշտվորվում, կենդանանում են ստորյա կյանքից վերցրած, ընթերցողին ծանոթ ու հասկանալի համեմատություններով: «Իրախտագրում», օրինակ, խոսելով խոստովանանքի անհրաժեշտության մասին, քանաստեղծն ասում է, թե Աստուծոց ոչինչ ծածուկ, գաղտնի չի մնում, նույնիսկ՝ ամենաշեշտ, ամենաանհրաժեշտի հանցանքները, և դա հասկանալի դարձնելու համար քերում է հետևյալ խոհմատո ու գեղեցիկ համեմատությունը.

...Որպես փոշիք, որ կան ի տան,
ոչ երևին մեզ,

Իսկ շող լուսոյն առեալ գփոշիքն՝
անթիւ յայտնեն մեզ: («Իրախտագիր»,
157)

«Աղամզիրը» իրեն հենք ունի դյուցազներգական ու աստվածաշնչական պատվիրանագանցությունը, ստաջին մեղքի պատմությունը (Մանդ. գիրք, գլ. Բ, Գ): Հայտնի է, որ «Աղամզիրը» մտահոլացման առումով հիշեցնում է ժՀ դ. անգլիական քանաստեղծ Միլտոնի «Իրախտ կորուսեալ» ստեղծագործությունը:

«Աղամզիրը», Ա. Չոպանյանի դիպուկ բնութագրությամբ, «մեր նախնայացնե մնացած միակ երկարաշունչ փիպաբերթվածն

է՝ մարդկային գրականության ամենեն մեծ նյութերեն մեկուն վրա գրված, և որ ունի որոշ ինքնատիպություն և իր մեկ քանի մասերուն մեջ գրական մեծ գեղեցկություններ. Օնորմալիի «Յիսուս Ռոդին» կամ «Վիպասանությունը», Թշկուրանցիի «Արարածքը», Առաքել Բաղիշենցիի «Յովսեփոս պատմությունը» և ասուց նման մեկ քանի սակավաթիվ գործերը զոր այս նյութին մեջ արտադրած են մեր նախնիք, շատ վար կը մնան «Աղամզիրին», որուն հետ կրնա քաղցատվիլ միայն «Ճարմանի Ամանը», թեպետ այս վերջինն ալ՝ բարոյական ու գեղեցկագիտական տեսակետով՝ «Աղամզիրի» բարձրությանը չի հասնի»:

Իրախտաբանակ նախնիների՝ Աղամի ու Եվայի փառքը կարճատև է եղել իրենց հանցանքով: Նրանք սխալվել են. մարդիկ պետք է նկատի ունենան նրանց դատն փորձը և ապրեն արժանապայել, գեղեցիկ կյանքով: Արտաքսված է մարդը երջանկավետ աշխարհից և ստիպված է կռվել, դիմադրել չարին՝ նոր կյանքի ուղի հարթելու համար: Հեռանկարի հարցում լավատես է Սյունեցին: Նա հույսը կապում է ա՛յս կյանքի հետ և հուշում է՝ եթե մարդկությունը ցանկանում է դուրս գալ ներկա դժոխային փնակից, որ հակադիր է նախնիների դրախտաբանականության երազելի օրերին, չպիտի կրկնի անցյալի սխալները, գե՛րը պիտի մնա մեղքերից: Սակայն այս բանը դեռ բավարար չէ: Երջանկությունը հնարավոր է նվաճել միայն գործուն պայքարի, մշտական բարոյական կատարելագործման, ինքնակատարելագործման միջոցով: Այսպիսով կարելի է վերականգնել կորցրած հոգևկան, հետևաբար և՛ ընկերային ներդաշնակությունը:

Կորած ներդաշնակությունը վերստաբնելու մասին խոսք կար արդեն Նարեկուն (քան ժԸ, Բ)

Եթե ժ՝ դարի հանճարեղ քանաստեղծի բնարական հերոսը Աստուծոն է խնդրում, «հոգու կարկամած բազուկները վեր կարկանկով», որ իրեն դարձնի առաջվան նրման», Սյունեցին դիմում է մարդուն, իր ընթերցողին և ունկնդրին, հորդորելով ինքնակատարելագործմամբ բարձրանալ, մարքվել, վերադառնալ նախնական մարդու անադարտությանը, ուսուցանելով, որ անհոգ, անբան կյանքը ավելի է խորացնում մարդկային դժբախտությունը:

Մեկնելով ոչ միայն Աստվածաշնչից, այլև արարկանոն գրականությունից

* Առաջկ Սյունեցի, Իրախտագիր, Տրատարակից և Ներսես Տեր-Ներսեսյան, Վենետիկ, 1956, էջ 22:

* «Անամիտ», ժ՝ տարի (1908), ք. 1—4, էջ 3:

(հատկապես անկանոն «Ադամ գրքից») ու, Կատվածաբանական-հայրաբանական մատենագրությունից, ժողովրդական հանրապետական և բանահյուսության տարրերից, Սյունեցիներին ճոխացրել, բավական բարձր գեղարվեստական վարպետությամբ մշակել է նյութը: Բանաստեղծական ազատ երևակայությամբ նա հոգեբանական բացատրություն է տվել իր հերոսների արարքին: Եվ նրա Ադամն ու Եվան իրենց աստվածաշնչական նախատիպերի ավելի խորացված տեսակն են, ավելի ինքնուրույն, հանդուգն:

...Նույնպես կինըն լըրբեալ նախատեաց ըզՏէր, «Եսաբեաց զիս չարն և օձն՝ որ քո ստեղծեալ էր»: Քան ըզպտողն ուտելն այս մեծ յանցանք էր, Որ ոչ ասցին մեղայ, այլ նախատին զՏէր: («Ադամգիրք» Բ, գլ. Դ, 35—38)

Նույն կերպ Սյունեցիներն ամբողջացրեց լուսավոր, շքեղ, փարթամ ու երջանկավետ դրախտի պատկերը, որպիսի ճոխություն ու գունագեղություն չունի Աստվածաշնչի կամ պարականոն գրականության մեջ նկարագրվող դրախտը:

Դրախտը մի այգի է պտղատու ծառերով, ուր մարդիկ ու գազանները ապրում էին համերաշխ, չճանաչելով վիշտ, տանապանք, հիվանդություններ:

Աստվածաշնչում երեսուն անգամ հիշվում է դրախտը⁷: Այն բազմիցս հիշվում է նաև պարականոն գրականության մեջ, բայց դրախտի գեղարվեստական պատկեր ըստ էության չկա, ասենք, այդպիսի նպատակ չի հետապնդվել անգամ: Այնինչ Սյունեցու պատկերած դրախտը ոչ միայն գեղեցիկ է, այլև գերծ է վերացականությունից ու անըմբռնելի չէ: Նա իր երկի սկզբում վարպետորեն փրձնում է մի ամփոփ ու հմայիչ բնաշխարհ, իր երևակայած դրախտը, ուր երջանիկ կյանք է վայելել առաջին գույգը:

Էր փառք դրախտին անպատմելի, Չբնադատես և արխարալի:

⁷ Տե՛ս «Համարարքառ Հին և Նոր Կտակարանաց», աշխատասիրություն Թադևոս վարդապետի Աստու ածատուրեան Արասկերցոյ ի միաբանութենէ սրբոց Յակովբեանց, Երուսաղէմ, 1895, էջ 389: Հիշենք, որ անդրաշխարհի (դրախտի և դժոխքի), առաջին նկարագրություններից մեկը հանդիպում է Պետրոսի Հայտնության մեջ:

Ծաղկունքն տայր փայլըս փայլի՝ Արեգական նման և լուսնի... (գլ. Բ, 134)

Ամեն ինչ լուսավոր է ու փայլուն, նույնիսկ նախամարդու դեմքը փառքով ծաղկած՝ լույսի նման ճառագայթում էր: Հեղինակն աշխատել է հնարավորին չափ շքեղ ու վառ գույներով երիտասարդ դրախտը, որպեսզի հետո, երբ լույս պատմունքանից մերկանան նախնիները, հակադրությունը, կորստի մեծությունը ակնառու և ազդեցիկ դարձնի: Բանատողերի մեջ առկայծում են «ծաղկեալ, փայլատակեալ, պայծառացեալ, վառեր, հրճուեր, զմայլեր, փառատրեր» և այլ բազմաթիվ բառեր, լրացնելով դրախտի գեղեցկությունն ու փայլը: Ընթերցողը տեսնում է, որ նախնիների կյանքը լույսի, զվարթության, թարմության ու գեղեցկության տոն է եղել: Մի փոքր ավելի ուշ, երբ Սյունեցու հերոսներն արտաքսվում են դրախտից, նույն հաջողությամբ նկարագրվում է դժոխքը: Տպավորիչ է հակադրությունը:

Դժոխքի իրականությունը մտալ ու դժխեսն է նույնքան, ինչքան հրաշագեղ ու հրապուրիչ է դրախտը: Դրախտի վայելչագեղ պատկերը և նախնիների երջանիկ կյանքը տեսնելով է, որ չարանում, հանգիստը կորցնում է նախանձաբեկ բանասարկուն՝ Սադայելը:

Որպէս ըզհուր վառեալ հնոցին՝ Նա բորբոքէր զչարն ի հոգին. Եւ դիզանայր ծուխ նախանձին, Կայր խաւարեալ բոլորովին: (գլ. Գ, 5—8)

Սատանան հավաքում է «խաւարի չաւրատեսակ» դասերին, որպեսզի որոշեն, թե ինչ են ձեռնարկելու նախնիներին դրախտից գրկելու համար: Վերջապես.

Բերին զխաղողըն դառնալի, Ջողկոյզըն չար որպէս լեղի. Արկին ի հնձանըս թիւնալի, Ջի բարկութեան բաժակ լիցի... Սըրամտութեամբ զայն կոխէին, Եւ բարկութեամբըն ճըմէին. Ի վիշապաց գինի հանին՝ Խառնեալ թիւօք մահաբերին: Չսրամըտութեան իժից չարին, Չմըրուր մաղձից թիւնաւորին, Ջի որ ըմպէ զնա կամովին՝ Այլ հնարք չըկայ թէ բըժըշկին: Եւ ժողովեալ ի միասին, Չարատեսակ դասք խաւարին,

Ի սկսառակ պէս պէս լըցին՝
Մատուցեալ թաս տային մին մին:
(գլ. Գ, 121—144)

Նախաստեղծին հրաճցնում են զանա-
զան որակի՝ հիմարության, մոռացության,
թերության, ատելության, փառասիրության
և այլ շարիքների հարուցիչ գիւններ և նա-
խապատրաստում հանցանքի՝ պատվիրա-
նազանցության.

Այսպէս մատուց նախաստեղծին,
Զմաղն դառնութեանըն վիշապին՝
Զփմարութեան էառ գինին,
Ինդեաց ինքեամբ զամենեին:
(գլ. Գ, 193—196)

Ռոժնդ ու գեղեցիկ է այս տեսարանը և
մեզ հիշեցնում է «Մակբեթի» նույնատիպ
մի հատվածը (արարված չորրորդ, տեսա-
րան առաջին), որ շար ուժերը ապուր են
պատրաստում դրամայի հերոսին հանցա-
գործ դարձնելու համար, կաթսայի մեջ
լցնելով՝

Այծի լնդի, գեղձի ոտ,
Կարդ հայհոյիչ հրեայի,
Թաթարի շորթ, թուրքի քիթ,
Աձենք մեջը կաթսայի,
Եվ թանձրացնենք ապուրը,
Ու հյութայի դարձնենք...*

Ոչ պակաս հետաքրքրական է և շարու-
նակությունը «Աղամգրքում», երբ օձը հա-
մզում է Եվային՝ ճաշակել արգելված
պտուղը: Այստեղ իրար հաջորդում են բա-
նաստեղծի մեկը մյուսից դիպուկ քննա-
գրումներն ու դիտողությունները, նորանոր
հոգեբանական նրբագծեր, գյուտեր: Հեռա-
տես, խորամանկ ու զգուշավոր օձը Եվա-
յին խորհուրդ է տալիս իրենց գաղտնիքը
ստժամանակ թաքցնել Ադամից. նա հպարտ
է, դժվար է նրան համոզելը: Եվ որպեսզի
կասկած չմնա Եվայի մեջ, այս անգամ
նրան դիմում է ճարտասանական հարցով.

Թե՛ չէր ծառն այն պատճառ բարեաց՝
Վասն է՛ր ետեղծ ըզնա Աստուած.
Այլ ոչ թե՛ մահ կայր ի պըտղին,
Կամ որ ոտեն զայն՝ մեռանին...
(գլ. Գ, 175—178)

Բանաստեղծը աշխատում է դեպքերի
ընթացքը, գործողությունների ծավալումը

* Վերան Շերապիք, Ընտիր երկեր, հատ. 1-ին,
թարգմանություն Հովհ. Մանեֆյանի, Երևան, 1951,
Էջ 256:

նախապաս-բաստել, հիմնավորել տրամա-
բանորեն ու հոգեբանորեն: Նա մեծ հըմ-
տությամբ է ներկայացրել ինչպես Եվայի
խաբվելն ու հանցումը, այնպես և Ադամին
համոզելը, որպեսզի ուտի արգելյալ պը-
տուղը:

Նախամայրը խաբվելով օձից, փառա-
մոլությունից կուրացած, ճաշակել է պտու-
ղը և դառն վիճակի դատապարտվել. շարի
քուր կակիձները կան նրա մեջ: Նա գա-
լիս է Ադամի մոտ, սա զարմանքով տես-
նում է, որ կինը ոչ թե նախկին լուսազարդ
էակն է, այլ՝ «զարշեյի խառարային»:

Կինը նրան քացատրում է, որ շարից
խաբված՝ կերել է պտուղը և աշխատում է
համոզել, որ Ադամը ևս ճաշակի.

Թե՛ կայր քո սէր ընդ իս նախկին՝
Այն սէրն այսօ՛ր երևեսցին... (272—273)

Հանցանք գործելուց հետո, «Վասն նախ-
նացն Ադամայ և կնոջն» բանաստեղծու-
թյան մեջ, Եվան այնպես է կոծում, որ
դժվարանում է խոսել, իսկ նախահայրը
դիմում է նրան.

Պատմեա՛ ինձ, ո՛վ կին,
Զկորուստ քո անձին,—
Ըզմեզ անհրճար է կենալ
Այլ ի միասին:

Եվան չի ցանկանում միայնակ ելնել
դրախտից.

Սէրն այն առաջին,
Որ կայր մեր նախկին,
Եթե՛ ճըշմարիտ էր այն սէրն՝
Այսօր երկին: (Քերթվածներ, էջ 63)

«Աղամգրքի» զարհուրած ու անվճռական
հերոսը՝ Ադամը, չի ցանկանում մեղանշել,
քացատրելով, որ իր ոտեղը ոչ միայն չի
օգնի Եվային, այլև կկործանի իրեն, քայց
նրա մեջ մեծ է կնոջ նկատմամբ ու-
նեցած զգացումները, և նա երկմտում, տա-
տանվում է.

Խաղբայեցաւ միտքն Ադամայ
Յորժամ ետես խաբեալ գեռայ.
Կամէր լըսել քանից նորա,
Զի ունէր սէր մեծ ընդ նրմա:

Եվան իր հերթին անզիջում է, ոգևորվում
է մանավանդ Ադամի մեղմ վերաբերմուն-
քից, և վերջինս կնոջ հետևողական հար-
ձակվման առջև տեղի է տալիս, նահանջում:
Եվան նրան կանգնեցնում է դժվարին երկ-
ընտրանքի առաջ և հաղթանակում: Ադամը՝

Տարակուսեալ լինէր յանձին՝
Կընո՞ջ լըսել, թէ Արարչին,
Խելքն ընդ աչացըն գընացին,
Եթող զԱստուած և ոչ ըզկին:

Տեսարանը հոգեբանական խորությամբ
վերստին հիշել է տալիս Օեքսպիրին:
Վերևում հիշված դրամայում լեդի Մակբեթը
(առաջին արար, տեսարան յոթերորդ) հար
և անան միջոցներով ստիպում է իր ամուս-
նուն սպանելու Սկոտլանդի թագավոր Դուն-
կանին, ավելին, կարծես նա կրկնում է Ե-
վայի խոսքերը.

Այս բուպեից ետ՝ ես էլ այդ չափով կըչափեմ
սերըդ:
Վախենո՞ւմ ես դու լինել, քո գործով և
արիությանբ,
Ինչ որ կաս արդեն փափագներիդ մեջ:
(Էջ 227)

Այս կապակցությամբ արժե հիշել «Ա-
դամգրքի» ֆրանսերեն հրատարակության
մի գրախոսությունը, ուր ասված է, որ
Սյունեցու գործը գերազանցում է «խոր-
հրդախաղերու տեսարանները», ան կը հի-
շեցնե Օեքսպիրի տոսմ մը, ուր կինը իր
ընկերը կը մղե անհնազանդության, մար-
դուն ամենեն վեհանձն ու ամենեն անշա-
հախնդիր զգացումներուն կոչում ընելով⁹:

Առաքել Սյունեցին ճշմարտացի, համո-
զիչ գծերով բացահայտում է մարդկային
հոգեբանությունը, տղամարդու և կնոջ
փոխհարաբերությունները մասնավորապես,
պատճառաբանում հերոսների վարքագիծը:
Իսկ այդ վարքագիծը իր հերթին բխում է ի-
րավիճակի տրամաբանությունից:

Անչափ սիրեաց Ադամ ըզկին՝
Ջմահ յանձն առնոյր վասըն նորին...
(գլ. ԻԲ)

Եվ դա բնական է հնչում, որովհետև
Ով որ հայի ընդ կընոջ գեղ՝
Նորա խոցին ա՛լ չըկայ դեղ (ԺԼ)

Առհասարակ ուշագրավ բնութագրումներ
են ստացել «Ադամգրքի» գործող անձինք՝
բանասրկուն, օճը և հատկապես Ադամն ու
Եվան: Սրանք իսկապես կենդանի մարդիկ
են, յուրօրինակ կերպարներ՝ իրական փոխ-
հարաբերություններով ու հոգեբանությամբ:
Հենց այստեղ է Առաքել Սյունեցու արվես-
տի ուժը: Ընդհակառակն, այն թուլանում է

ու խամրում, երբ հեղինակը խախտելով չա-
փի զգացումը, հաճախակի մի կողմն է թող-
նում դեպքերի բնական ընթացքը, դիմում
քննարկան ու ճարտասանական շեղումնե-
րի: Դրանք գեղեցիկ ապրելու նույն կոչն ու
քարոզն են շարունակում, որ ծանոթ են
Սյունեցու և՛ արձակ, և՛ չափածո երկերից:
Այս շեղումները չեն փրկվում թարմ, ինք-
նատիպ պատկերների անկայությամբ, թե-
պետ դրանք շատ հաճախ հուզական ու
արտահայտչական մեծ ուժ են հաղորդում
բանաստեղծի խոսքին:

Վերոհիշյալ կերպարների կողքին ըստ
էության «Ադամգիրքն» ունի ևս մի հերոս՝
հեղինակը, որ հանդես է գալիս իրեն ուն-
կընդրի խորհրդատուն՝ լավի, գեղեցկի,
մարդկայինի, բարու և ճշմարտի շատա-
գով:

Հեղինակը բավական մեծ տեղ է հատ-
կացրել կողի (կնոջ) էությունը բացահայ-
տելու (այստեղից՝ նաև «Կողգիրք» հոր-
ջորջումը «Ադամգրքի»), ինչպես և՛ չարի
ու բարու գոյությանը, փոխհարաբերու-
թյուններին, առաքինությանը, հարցա-
դրումներ, որոնք շատ հետաքրքիր, սրա-
միտ դիտողություններ են պարունակում:

Առաքել Սյունեցու ստեղծագործության
մեջ գրեթե միշտ կողք-կողքի են հանդես
գալիս լավը և վատը, չարը և բարին, դը-
րախտը և դժոխքը: Եվ նա հավասար գո-
րությամբ բնութագրում է, ներկայացնում,
պատկերում դրանք, այդպիսով առավել
ցայտուն ընդգծելով, ակնառու դարձնելով
հակադրությունը, որ իր նախասիրած գե-
ղարվեստական միջոցներից մեկն է, և
ինչպես Ա. Չոպանյանն է նկատել Սյունե-
ցու մի տաղի կապակցությամբ, բանաս-
տեղծը, «սպացուցած է որ գիտեր այն-
քան թարմ ու պայծառ գույներ շողացնել
սուրբերուն երանությունը՝ նկարելու հա-
մար, որքան որ մոսյլ ու արհավրալից գույ-
ներ էր ստեղծած՝ մեղավորներուն անձ-
կությունը, սարսափը կամ հավիտենական
տանջանքներուն զարհուրանքը պատկե-
րացնելու համար»¹⁰:

«Ադամգրքի» որոշ հատվածներ գրված
են թատերգական ձևով, և քանի որ այն
ունեցել է նաև երաժշտական ձևավորում,
նախատեսված է եղել ներկայացվելու հա-
մար: Մաշտոցի անվ. մատենադարանի
թիվ 80 ձեռագրի գրիչ Հերապետ Ջուղա-
յեցին թղ. 100ա «երգ» է անվանում «Ա-
դամգիրքը» և երգողներից ու «քաղցրանը-
ուագ վերածայնողներից» խնդրում հիշել ի-
րենց: Նույն մատենադարանի մի այլ ձե-

⁹ Գ. Ֆեներճյան, Արշակ Չոպանյան. կենսագրա-
կան և մատենագրական նոթեր, Փարիզ, 1938, էջ
64:

¹⁰ «Անամխո», 1, 2 2:

նագրում (1637, թղ. 3ա) կա այսպիսի նշում. «Յիսուս Ռոյոյ» ձայն է: Ըստ երկրպագության այս կապը նկատի ունենալով է հեղինակը առաջին «Աղամզրքի» միջատակարանում գրում Ներսես Օճորհազու մասին:

Ռոստատրքս վասն այն գրեցի,
 Զի դիրաման մարդկան լիցի,
 Թեպէտ շատ բան կան աշխարհի,
 Այս հաճելի ըստ Ներսէսի: (93—96)

Հավանական է, որ «Աղամզրքը» գրվել է մարդկանց գոտանական ներկայացումներից (որոնց մասին Սյունեցիի ակնարկում է) հետո պահելու նպատակով (ինչպես Օճորհազուի գրեց իր հաճելուները), աշխատելով զվարճանքը, ժամանցը նպատակապես, օգտակար դարձնել և մարդկանց գիտելիքներ ու բարոյական դասեր տալ:

Իր թերականական աշխատության մեջ, խոսելով կատակերգության մասին, Սյունեցիի գրում էր. «զկատակերգութիւն. աշխարհօրէն, այսինքն զնախնեաց պատմութիւն սաւ. զի զչարն կարէին և զբարիսն զովին, որպէս այժմ շերասացք, և տալանին սուննն» (ձեռ. 2380, թղ. 206ա): Դժվար է ասել՝ կատակերգության այս բնութագրումը Սյունեցու պատկերացմամբ որքանով էր կապվում «Աղամզրքի» հետ, բայց այստեղ ևս տեսնում ենք նախնիների պատմությունը, որ «զչարն կարեն և զբարիսն զովին»:

«Աղամզրքի» սյունն ծավալվում է մեծ մասամբ տրամախոսությունների միջոցով: Նրա այդ յուրամատկությունները նկատի ունենալով է, որ Մ. Արեղյանը գրել է. «Այդ [«Աղամզրքը»] մի փորձ է մի նոր գրական տեսակի»¹¹:

¹¹ Մ. Արեղյան, Երկեր, հտ. 9, Երևան, 1970, էջ 422:


Մի շարք նորություններ բերեց «Աղամզրքը»: Դրանով բնդլայնվեցին միջնադարի հայ բանաստեղծության բնդարկման, տեսակների ու առնչությունների շրջանները: Նա կնոջն ու սերը պատկերեց մի նոր, հայ քնարերգության համար անսովոր տեսանկյունից, նոր ձևով: Երև տաղերգության մեջ երգվում էին կնոջ մարմնական գեղեցկությունները, երբեմն՝ նաև հոգևոր բարեմասնությունները, ապա Սյունեցու կերտած Եվայի կերպարը կնոջ համակողմանի բնութագրության մի ուշագրավ փորձ է: Եվան կատարելապես հողեղեն էակ է, օժտված նաև մարդկային թույություններով:

Մերկապարանց չէ Սյունեցու խոսքը. նա նարուստ երևակայություն ունի, պատկերավոր մտածողություն, և դա նրա բանաստեղծական միջոցի ամենարժեքը կողմերից մեկն է:

Առաքել Սյունեցիի միջնադարյան հայ գրականության ամենարարդ ու հակասական դեմքերից է: Դրա արտահայտությունն է և այն, որ նրա երկերում կողք-կողքի կարելի է գտնել բանաստեղծական շողշողուն գրուեր և թերակերտ, միջակ կրտորներ: Սակայն նրա ստեղծագործության թերությունների մեծագույն մասը ոչ թե նրա կարողությունների, տաղանդի թերին է, այլ՝ ժամանակի ճաշակի ու պատկերացումների արտահայտությունը, և ինչպես Հ. Հ. Ազգեղյանն է նկատել Ջոն Միլտոնի կապակցությամբ, «21՝ արժան խնդրի միշտ զպայծառ փայլումն հանճարդ, որպէս և ոչ միշտ զկայս արեգական ի միջօրի անդ»¹²:

¹² «Միլտոնի Դրախտ կորսուեալ», բարգմ. յանգղիական բնագրէ Հ. Յ. Ազգեղյան, Վենետիկ, 1824, էջ 22:





ՀԱԿՈՒ Է. ՔՅՈՍԵՑԱՆ

**«Ի ԽՈՐՀՈՒՐԴ ՅՈՎՆԱՆՈՒ ՄԱՐԳԱՐԷԻ» ԵՐԿԸ
ԵՎ ՆՐԱ ՀԵՂԻՆԱԿԸ**

«Անանիա վարդապետի» անվամբ մեզ են հասել մի շարք երկեր, որոնք «Հայկական մատենագիտության» մեջ օրինակելի զգուշավորությամբ գետնելված են երկրաչափական ճառերի շարքում¹: Ելնելով բանասիրական մի շարք դիտումներից, ինչպես նաև՝ նյութի ոճական որոշակի նկարագրից՝ գալիս ենք այն հետևության, որ խնդրոտ առարկա երկը առավել թե նրվա ստուգությանը վերագրելի է հայ մատենագրության բազմերախտ մշակներից մեծամուն Անանիա Ծիրակացուն:

Խոսքը «Ի խորհուրդ Յովնանու մարգարէի» վերտառությամբ ճառի մասին է (սկ. «Յաղագս Յովնանու հակիրճ և համառօտ բանի անցցուք, բացայայտելով զծածկեալ խորհուրդն... և նորոգեալք հոգւով գիտութեամբ, զի միաբանութեամբ ի մի բերան փառաւորեցնեն...»), որ ձեռագրերում հանդիպում է նաև «Քարոզ երանելոյն Անանիա վարդապետի ի վերայ խորհրդոյ Յովնանու մարգարէի», «Քարոզ...ի խորհուրդ Յովնանու մարգարէի», «Քարոզ...ի վերայ խորհրդոյ Յովնանու մարգարէի», «Յաղագս Յովնանու մարգարէի հակիրճ» խորագրային նման և այլազան տարբերությունով², որոնցում առանց բացառության,

իրն ճառի հեղինակ, անորոշաբար «Անանիա վարդապետի» անունն է հիշվում:

Երկը ժամանակին ուսումնասիրվել է որոշ վերապահությամբ հրատարակվել է Հ. Բարսեղ Սարգիսյանի կողմից իրն հեղինակությունը Ե դարի մատենագիր Անանիա Մյունեցու (կամ՝ Թարգմանչի): Ուշադրություն դարձնելով ճառի լեզվա-ոճական առանձնահատկությունների վրա՝ հայագետն իրավացիորեն գրում է. «Յամենայն դէպս, սոյն ճառն իր լեզուի համեմատական մաքրութեամբն ու կորովով հանդերձ, պէտք էմ ըսել, թէ ունի ինչ ինչ, որք Ե դարու մեր երիցագոյն թարգմանչաց ամենաընտիր հայկաբանութեան չեն պատշաճիր»³:

Գործի հեղինակային պատկանելության ճշտորոշման մեջ առհասարակ և նման պարագայում, մասնավորաբար, առաջնային կարևորություն ունի այն երկերի հայտնանշումը, որոնցից օգտվում է ճառի հեղինակը: Քննելի երկը չի կարող պատկանել Ե դարի մատենագիր Անանիա Թարգմանչին այն պարզ պատճառով, որ նրա մեջ վկայաբերված, Եպիփան Կիպրացուն կամ Դորոթեոսին վերագրվող, «Մահ մարգարէից» կամ «Անուանք մարգարէից և

¹ Տե՛ս Հ. Ս. Անաչան, Հայկական մատենագիտություն, հտ. Ա, Երևան, 1959, էջ 757—795:

² Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարանի հետևյալ ձեռագրերը. № № 83 (էջ 299ա—306բ), 788 (էջ 254ա—257բ), 998 (էջ 194բ—196ա), 9281 (էջ 12բ—15ա), 8276 (էջ 70բ—72ա):

³ Հ. Բարսեղ վ. Սարգիսեան, Անանիա Թարգմանչին և իր գրական գործոց նմոշներ, Վենետիկ, 1899, էջ 15: Հ. Գ. Զարբխանայանը ճառս վերագրում է Անանիա Սանահնեցուն (ԺԱ դ.). «Հայկական հին դպրութեան պատմութիւն (Դ—ԺԳ դար)» Վենետիկ, 1897, էջ 588—590:

վարք» սուրբգրային անվավերը (մուտք գործելով հայ միջավայր Ե դարից հետո) մեր մատենագրությանը հայտնի է Է—Ը դարի թարգմանությամբ¹: «Մահ մարգարէից» երկը պարունակող վեցնովկյան ձեռագրերից մեկի հիշատակարանում սույն գործի համար նշվում է, թե «Պարթայ գրուեալ»: Սա նշանակում է, որ գործի «լոյն կամ սեմական քնագիրը» գտել և հայերեն է թարգմանել Դավիթը² (այս և հետագա ընդգծումները մերն են—Լ. Բ.): Սակայն ո՞ր Դավթի մասին է խոսքը: Է—Ը դդ. հայ թարգմանական գրականության մեջ հիշատակվում են երկու Դավիթներ. Դավիթ Տարոնեցի (Է դ.) և Դավիթ Հյուսիսայտոս Կոստանդնուպոլսեցի (Ը դ.): Սրանցից երկրորդը, որ ազգությամբ, ըստ երևույթին, հույն էր³, չի կարող «Մահ մարգարէից» անվավերի թարգմանիչը համարվել: Այսօրինակ հավաստման համար ամրակայուն հիմք կարող է ծառայել թարգմանության լեզուն: «Մահ մարգարէից» անվավերը, ինչպես դիտել է տալիս նաև Լ. Բ. Սարգիսյանը, «բոլորովին ազատ է» Դավիթ Հյուսիսայտոս Կոստանդնուպոլսեցու և Ստեփանոս Սյունեցու աշխատակցությանը հայերեն թարգմանված երկերի ակնհայտ հունարանություններից⁴: Հեշտուհար, հայագետի հիմնավոր հավաստմամբ, այստեղ հիշատակված Դավիթը ոչ այլ ոք է, քան Է դարի առաջին կեսի նշանավոր մատենագիր Դավիթ Տարոնեցին (մահ. 661 թ.)⁵, որ թարգմանական գրա-

կանության մեջ հայտնի է իբրև թարգմանիչը Ս. Բարսեղ Կեսարացու ճաների⁶, ճաներ, որոնք աչքի են ընկնում առավել հայեցի թարգմանությամբ, որպիսի հանգամանքը շնչուելի է թվում հունարան հայերենի ծաղկման այդ շրջափուլի համար:

Արդ մեկ անգամ ծանոթ լինելով Ս. Բարսեղ Կեսարացու երկերից «Վեցօրեայի» հայերեն ոսկեդարյան թարգմանությանը⁷, քացատված չէ, որ Անանիա Շիրակացին պետք է օգտվեր նաև Ս. Բարսեղի ճաների (այս պարագային արդեն իր օրերին) թարգմանիչ Դավիթ Տարոնեցու ալլաբնույթ թարգմանություններից: Անավանիկ այս թարգմանություններից մեկն էլ հենց «Մահ մարգարէից» սուրբգրային անվավերն էր, որից և օգտվել է Անանիա Շիրակացին: Օգտվելու կերպն անգամ հատուկ է մեր մատենագրին, հանգամանք, որ անստրակոյս խոսում է հօգուտ մեր վերագրումի: Ինչպես հայտնի է (անշուշտ քացատելով քառացի հատաչափերությունները) Ս. Բարսեղի «Վեցօրեայից» օգտվելիս Շիրակացին կամրագրում-համառոտում է համապատասխան հատվածները և հետո միայն դրանք ներմուծում իր երկերի մեջ: Սկզբնաղբյուրից օգտվելու այս քակրքունքը կիրառվում է ներկա դեպքում ևս: «Ի խորհուրդ Յովնանու մարգարէի» ճանի «ստեալ մարգարէին գմայր իր՝ գնաց ի մէջ հեթանոսաց, ասելով, թէ ստեցի մարգարէութեան իմոյ» տողերը ոչ այլ ինչ են, քայց եթե խմբագրում-համառոտումը հիշյալ անվավերի «այ ստեալ գմայր իր չոգալ պանդխտեցա ի Սուր, և ի գաւառին աղագգեաց ընդ հեթանոսս. զի ասէր թէ այսպէս քարծից գնախատիսս իմ, զի ստեցի ի մարգարէանալ իմում...»⁸ հատվածի:

Բացի սուրբգրային այս անվավերից, ինչպես արդեն իրավացիորեն նկատվել և ցույց է տրվել, Անանիա վարդապետը զգալիորեն օգտվել է Փիլոն Նրբալեցու «Յաղագս Յովնանու» երկից: Անանիայի և Փիլոնի ճաների համապատասխան հատվածները «ամբողջութենէ անկի՝ քստերու, քացատրութեանց և գաղափարի նոյ-

¹ «Էն յիբրայի,—այս կապակցությամբ գրում է Լ. Բ. Սարգիսյանը,—«Մահ մարգարէից» գրութիւնն եթէ Եպիփանու Կիարացոյ կամ Դորոթեոսի հարազատ գործ չէ, դժուար է ընդունել, որ Ե դարում Անանիա Թարգմանչի ծանոթ եղած լինէր: Ուստի դարձեալ կը կրկնենք, թէ այս և յետագան մի բանի առումներ ի նկատի առած, վերապահութեամբ միայն Անանիա Թարգմանչի անուամբ կը հրատարակենք զայս, մինչև որ ուրիշ մեզի անձանք օրջագրեր գան և նոր լոյս սփռեն այս մօրի կետիս վերայ»: Լ. Բ. Սարգիսեան, Անանիա Թարգմանչի... էջ 15:

² Տե՛ս Լ. Բարսեղ վ. Սարգիսեան, Ուսումնասիրութիւնք Հին Կտակարանի անվաներ գրոց վրա, Վեներիկ, 1898, էջ 272:

³ Լ. Բարսեղ վ. Սարգիսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վեներիկ, հտ. Բ, Վեներիկ, 1924, էջ 801:

⁴ Տե՛ս Լ. Բ. Սարգիսեան, Ուսումնասիրութիւնք Հին Կտակարանի... էջ 272:

⁵ Լ. Բ. Սարգիսեան, Նշվ. աշխ., էջ 271—272, Լ. Անտոյան, Հայոց անձնանունների քառարան, հտ. Բ, Երևան, 1944, էջ 27:

⁶ Տե՛ս Կ. Մորադյան, Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցօրեան» հայ մատենագրության մեջ, Երևան, 1976, էջ 174—178:

⁷ Կ. Մորադյան, Նշվ. աշխ., էջ 210—215:

⁸ Լ. Բ. Սարգիսեան, Անանիա Թարգմանչի... էջ 3, նաև՝ տողատակ:

⁹ Տե՛ս «Մանգարան սին և նոր նախնեաց, Ա. Անկանոն գիրք Հին Կտակարանաց», Վեներիկ, 1896, էջ 211:

նույթին ցոյց կու տան»¹³: Իր այս հավաստիացումն ավելի վավերական դարձնելու համար Հ. Բ. Սարգիսյանը վկայակոչում գուգադրում է Փիլոնի և Անանիայի համա-

նուն ճառերի աղերսվող հատվածները: Ի շարս հայագետի բերած գուգահեռ տեղիների՝ նկատառելի են նաև երկու ճառերից հանդիպադրվող հետևյալ հատվածները.

«...քանզի ես իբրև ի ձեղումնացելոյ իմն որովայնէ՝ պղնձի իմն ձեղումսք և երկաթի որմնոք ըմբռնեալ ծածկիմ... և թեոցն շարծումն՝ իբրև կառք իմն թագաորի»:

«Իբրև պղնձի պարսպօք (շուրջ փակեալ) կարծրագոյն կողիք վիշապին, և ձեղում յարկին՝ քան գերկաթ կարծրագոյն Արդ առեալ կիտոսին գՅովման շրջեցուցանէր..., իբրև կառք եղեալ թագաորի»:

«Փիլոնի Երրայեցույ Մնացորդք ի Հայս...», Վննիտիկ, 1828, էջ 590.

Հ. Բ. Սարգիսեան, Անանիա թարգմանիչն..., էջ 8:

Հայտնի է, որ Փիլոնի երկերի հայերեն թարգմանությունը, կատարված լինելով 460—470 ական թվականներին և այսու մաս կազմելով հունարան թարգմանությունների առաջին խմբի, վերագրվում է Անանիա թարգմանիչին: Ընդունելով հանդերձ այս քիչ հավանական վերագրումը՝ պետք է նկատել սակայն հետևյալը. Եթե արձանագրված գուգահեռ հատվածների մի մասը Փիլոնի երկի համապատասխան հատվածների հետ ունեն սուկ իմաստային անորոշ, անստույգ ընդհանրություններ (որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ իմաստային, «բացատրական» ազատ հառաջաբերությունը փիլոնյան հատվածների), ապա, դարձյալ Սարգիսյանի կողմից արձանագրված, մեր գուգադրման մեջ առկա ընդգծումները վկայում են այն մասին, որ Անանիա վարդապետն օգտվել է Փիլոն Երրայեցու համանուն երկի մինչ այդ արդեն հայտնի հայերեն թարգմանությունից: Եվ իրապես. Դժվար թե թարգմանիչն ինքը օգտվեր իր իսկ թարգմանությունից: Նույն նյութին նըվիրված մի գործ գրելու համար, ամենապարզ տրամաբանությամբ, թարգմանիչ-հեղինակն ուղղակի կդիմեր երկի հունարեն բնագրին, ինչն իր հերթին պետք է օրինակապետրեն բացատրեք բառային կամ բառա-դարձվածային որևէ նույնությունը:

¹³ Հ. Բ. Սարգիսեան, Անանիա Թարգմանիչն..., էջ ԻԲ:

* Ուստի անհավանական է թվում Հ. Բարսեղ Սարգիսյանի պնդումն այն մասին, թե Անանիան «յօրինելով իր այս ճառը՝ բնականապես Փիլոնի գաղափարներու հետ՝ անոր թարգմանութեան մէջ նախապէս գործածած իր բառերն... իսկ՝ իբրև ընդելական մի բան՝ վերստին յեղելած է աստ և անդ». Անանիա Թարգմանիչն..., էջ ԻԳ: Վաստակաշատ բանասերի այս տեսակետը մերժելի է թվում թեկուզ հետևյալ օրինակով. Եթե Մակարայեցվոց

Միմչդեռ մեր հանդիպադրման մեջ առկա այնօրինակ նույնություններն, անտարակույս, ինչպես արդեն նկատվեց, ենթադրում են սկզբնաղբյուրի հայերեն թարգմանություն: Հունարան թարգմանություններից օգտվելու այս նախասիրությունը (որ թելադրված էր գիտական եզրաբանության մեջ հունարան դպրոցի ձեռք բերած խոշոր նվաճումներով (ինչպես հայտնի է լավագույնս դրսևորվեց Անանիա Թիրակացու քառապաշարում¹⁴): Այս պարագային ևս հավատարիմ մնալով իր այդ նախասիրությանը, հեղինակն օգտվում է գիտական կտածողությունը խթանող հունարան թարգմանություններից:

Ձեռագրական բնույթի տվյալները նմանապես իրենց ոչ անկարևոր նպաստն են բերում խնդրի պարզաբանմանը: Մաշտոցի անվան Մատենադարանի №№ 1007 (էջ 93բ—101բ), 3795 (էջ 71բ—76ա) ձեռագրերում գտնելով «Երիցս երանեալ վարդապետացն Յովհաննու Ոսկեբերանի և Եփրեմի և Անանիայի ասացեալ ի Յունան մարգարէ» խորագիրը կրող նյութը խընդրո առարկա երկի խմբագիր տարբերակն

գրքի հայերեն թարգմանության և Կորյունի ու Եղիշեի հայտնի երկերի մեջ նկատվող ռճական, բառային, բառա-դարձվածային նույնություններն ու նմանություններն ենթադրել էին տալիս, թե Կորյունը կամ Եղիշեն է Մակարայեցվոց գրքի հայերեն թարգմանիչը, ապա առավել համակողմանի և հանգամանակից հետազոտությունները բերում են «նմանություններն ու համընկնումները բանաբաղոյթամբ ու ազդեցություններով բացատրելու» կարծիքին, ինչը «փաստերի տրամաբանությամբ առավել հիմնավոր է». Հ. Մմալյան, Մակարայեցվոց գրքի հայերեն թարգմանության ժամանակի և հեղինակի մասին, «Էջմիածին», 1980, № Բ—Գ, էջ 70—74:

¹⁴ Հմմտ. Լ. Մանանդյան, Հունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1828, էջ 92:

Է¹⁵: Հիշյալ ձեռագրերը ժԱ—ԺԲ դարում

«ՏՈՆԱԿԱՏՈՆԱՆ» ժողովածուից պարզում է, որ խմբագիր այս էստի հաստիքների մի զգալի մասը բերված է Անանիա վարդապետի ուսումնասիրելի համանուն երկից: Փնդդեռ Անանիայի ճառից համապատասխանող մյուս հաստիքները («ԵՆ Եղեկեկի աստուծոյ գլխի քարտեղ յարեան... Յունան փառչելք յերեսաց Տեան» (Մատենադարան, ձեռ. № 2111, էջ 202բ), «Քի Աղանայ արբել ակտիս աստուծանալոյն... արտաքո կանացն Աստուծոյ» (էջ 202ա—բ), «զի նրեպքն գրագառքն անման և զի-նաստուծին ժողացան... ընդ նմին և քազառ-բերք...» (էջ 202ա—բ), որոնք պետք է օրինաչա-պորեն նույննաչին Հովհան Ոսկերեցուի՝ դարձ-բալ այս նյութին նվիրված «Յաղագս ապաշխարո-րեան առաջ քան զմտա պահոցն և վասն Յով-հանու և Նիկուեացոցն (սկ. «Պայծառ է մեզ այ-սոր տօն...») Վեներիկան մեկ այլ ձեռագրում «Երևելի է վաղելոյ է տօն... (...եղիցի և մեզ ա-ղօքք սորս) (տես «Յովհաննու Ոսկերեցուի ճառք», Վեներիկ, 1881, էջ 28—45, որը բավակա-նաչափ տարբերվում է Ոսկերեցուի անվամբ պահ-պանված և նույն այս նյութին նվիրված «Կասն քարոզութեան Յովհանու ի քաղաքն Նիկուե, (սկ. «Տեսէք զԱստուծոյ զարտօրին, տեսէք Աստուծոյ մարդասիրտին...») խորագրով ճառից («Յով-հաննու Ոսկերեցուի ճառք», էջ 530, նույնը՝ Մա-տենադարան, ձեռ. № 4682, էջ 177ա—180ա, Լ. Յ. Տաշեան, Յուցակ հարկերն ձեռագրաց Մատենա-դարանին Միջրարևանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 8, Կ. արք. Պողոթեան, Մայր ցուցակ ձեռա-գրաց Արքեպ Յակոբեանց հո. Ա, Երուսաղեմ, 1966, էջ 14: Վերջինս նույնպես, ինչպես համեմատու-թյունն է պաշտոն, տարբերվում է Անանիա վար-դապետի խնդրո առարկա ճառից (ինչպես նաև նյութի հետ առնչվող, դարձբալ Ոսկերեցուի մի այլ, հարկերն քարգվանությանը աննպատ «Homilia in poenitentiam Niniuitarum», (Migne, PG. t. 64, col. 424—433) ու Եփրեմ Ասորո: «Յազաշխարտինն Նիկուեացոց» (սկ. «Անա հրաման հասեալ առ ճարգարեն Յովհան քարոզել Նիկուեի... Օրհնութիւն նա և օծելոյ նորս) («Սիրոյն Եփրեմի Մատենա-գրութիւնք», հո. Գ, Վեներիկ, 1838, էջ 107—126, նույնը՝ Մատենադարան, ձեռ. № 4682, էջ 183ա—189բ) վերտառությանը ճառերի համապատասխան կտորների հետ, սկզբունքորեն տարբերվում են դրանցից: Ինչպես երևում է, Ոսկերեցույան ու Եփ-րեմիան հաստիքները խմբագրվել են նրանց մեկ-նույնական տարբեր երկերից: Օրինակ Ոսկերեցու-յան հաստիքներից մեկը («Անդ կիցն առ քազա-տրն եկն... ընդ նմին և քազառբերք», ձեռ. 2111, էջ 202ա—բ) ծագում է նրա Մատենոսի հայտնի մեկնությունից (տե՛ս «Յովհաննու Ոսկերեցուի Կատանդոնապոսի Եպիսկոպոսականի լիւնտորա-նագիրն Մատենոս, Գիրք կրկին», գիրք Ա—Բ, Վե-ներիկ, 1826, էջ 629):

ընդօրինակված «Տոնապատճառ» ժողովածուներ են: Թիվ 1007 գրչագրի հիշա-տակարանը Տոնապատճառի կազմավոր-ումն ավանդաբար կապում է Արիստակես Կարողիկոսի (Գ ղ.) անվանը¹⁶: Տոնապատ-ճառի պատմությունից հայտնի է սակայն, որ նրա առաջին կազմողներից մեկը Ջաջարիա Չազեցի Կարողիկոսն (855—875) ու ժ—ԺԱ դարի նշանավոր մատենագիր Սամվել Կա-մրջամորեցին է իրապես¹⁷: «Տոնապատճառ-ն» իրև «ուրույն միավոր-ժողովածուի» հնավանդությունը փաստող այս երկրորդ հանգամանքը առաջնային կարևորություն ունի հայ մատենագրության մեջ Անանիա վարդապետի ճառի կենցաղապարման ժա-մանակային սահմանարածանը ճշտորոշել-լու հարցում: Բանասիրությունը «Տոնա-պատճառ» ժողովածուի վաղագույն տար-բերակի վերջնական կազմավորումն ու ամբողջացումն ամենայն իրավամբ Սամ-վել Կամրջամորեցու անվան հետ է կա-պում: Նրա կազմած Տոնապատճառը նյու-թերի ընդգրկման իր նկարագրով գրեթե նույնանում է վերն հիշատակված № 3795 ձեռագիր Տոնապատճառին¹⁸: Փաստերի այսօրինակ հաշվառումն ու համադրումը խոսում է հօգուտ Անանիա վարդապետի քննվող երկի վաղեմության: Ամեն պարա-գայի պարզ է, որ խմբագիր այս գործը ստեղծվել է մինչև ժ դարը, իսկ բուն երկը՝ 661 թ—ից առաջ, այսինքն՝ մինչև Դավիթ Տարոնեցու մահը: Երկի վաղեմությունը փաստող կարևոր հանգամանք է նաև նրա խորագիրը: Անանիա վարդապետին տրվող «Երիցս երանելալ» սրբախոսական պատ-վանունը, ինչպես նաև՝ տիեզերական եկե-ղեցու մեծագույն հեղինակություններ Ոս-կերեցուի ու Եփրեմի հետ հավասար Ա-նանիայի անվան հիշատակման իրողու-թյունն ինքնին պերճախոս վկայությունն է մեր մատենագրի հնության և անբեկանե-լի հեղինակության: Այսպիսի հեղինակու-թյուն նվաճելու, այլև՝ երկի խմբագրումն իրականացնելու համար, թվում է, որոշա-կի ժամանակ էր հարկավոր: Բացառված չէ, որ գործը խմբագրել կամ արդեն խըմ-բագիր փնճակում ժողովածու է ներմուծել նախապես Ջաջարիա Չազեցին, իսկ ավել-ի ոչ՝ խորագիրը ձևակերպել և ճառը վերջնականապես հաստատել Տոնապատ-ճառի մեջ Սամվել Կամրջամորեցին: Ամեն

¹⁶ Մատենադարան, ձեռ. № 1007, էջ 466բ, Փալ-լակ Անբարյան, «Տոնապատճառ» ժողովածուն, «Բնագրեր Մատենադարանի», 1971, № 10, էջ 118:
¹⁷ Փ. Անբարյան, Եզվ. աշխ., էջ 119:
¹⁸ Փ. Անբարյան, Եզվ. աշխ., էջ 119—121:

դեպքում, զանցանելով մնան վարկածի ընդունելի կամ անընդունելի լինելը, բացորոշ է մատենագրի ու նրա երկի մեզանում վայելած ճանաչումն ու հեղինակությունը տակավին Թ—Ժ դարերի սահմանագծում, շնորհիվ որի, արդեն այդ պատմաշրջանում այն, իբրև տոնապատճառային նշանակություն ունեցող կարևոր միավոր, մեկ անգամ ևս հյուրընկալվել էր հայ եկեղեցական մատենագրության այս արժեքավոր հուշարձանի մեջ:

Այսու միանգամայն աներկբա է, որ «Ի խորհուրդ Յովնանու մարգարէի» ճառը չի կարող պատկանել այդ ժամանակաշրջանի առավել հայտնի Անանիաներից ո՛չ Անանիա Մոկացի Կաթողիկոսին (941—985), ո՛չ Անանիա Նարեկացուն (Ժ դ.)¹⁰ և ո՛չ էլ Անանիա Սանահնեցուն (ԺԱ դ.): Սակայն, ինչպես նկատվեց, այն չի կարող պատկանել նախորդ Անանիաներից Անանիա Թարգմանչին նույնպես: Կնշանակի. «Ի խորհուրդ Յովնանու մարգարէի» ճառի հեղինակ հիշվող «Անանիա վարդապետը» ապրել է Անանիա Թարգմանչից հետո և Ջաքարիա Ջազեցուց առաջ: Այդ ժամա-

նակահատվածի մեզ հայտնի համանուն մատենագիրներից միակը և, ընդ որում, ամենանշանավորը Անանիա Թիրակացին է, որին և վերագրում ենք այս գործը: Մեր վերագրման իրավասությունն է կարծեք հավաստում նաև Մաշտոցյան Մատենադարանի № 2111 ձեռագրում (ընթրինակված է՝ 1654—75 թթ.) գտնվող նույն այս խմբագիր ճառի խորագիրը. «Երիցս երանելի սուրբ վարդապետացն Յովնանու Ոսկեբերանի և Եփրեմի և Անանիայի Թիրակացույ ասացեալ...» (էջ 202ա): Թվում է, պատահական չէ Անանիա Թիրակացու անվան հիշատակումը (թող որ ԺԱ—ԺԲ դարից անհամեմատ ուշ) ԺԷ դարում ընդօրինակված երկի խորագրում: Այն, ըստ երևույթին, պետք է կապել ձեռագրային բազմադարյան ավանդույթի հետ, ավանդույթ, որ հարյուրամյակներ շարունակ կարող էր խորագրում Թիրակացույ անունը պահպանել (ինչպես որ նույն այս խորագրում տևաբար, անփոփոխ ձևով պահպանել ու սրբագործել էր Ոսկեբերանի և Եփրեմի անունները (և, միայն ժամանակի ընթացքում, որոշ ընդօրինակությունների մեջ, շեղվելով ընկալյալ ավանդույթից Թիրակացույ-ն մոռացության է տրվել: Բացառված չէ, որ ԺԷ դարում ընդօրինակված այս գործը գրչագրվել է առավել հին, նախագաղափարին փոքրիշտոն մոտիկ կանգնած մի ձեռագրից:

Այսօրինակ փաստերի հաշվառումը մեզ բերում է այն եզրակացության, որ ցարդ անորոշաբար «Անանիա վարդապետի» անունը կրող «Ի խորհուրդ Յովնանու մարգարէի» ճառն իրապես է դարի մեծահամբավ մատենագիր Անանիա Թիրակացու գրչին է վերագրելի:



Երկի համակողմանի վերլուծման ու արժևորման մեջ նվազ շահեկան չէ նաև զուտ հայրախոսական աղբյուրների քննությունը:

Քրիստոսի զոհաբերման խորհուրդը մեկնող հատվածում, ակնարկելով Ղևտ. ԺՁ 9—10 համարը, Անանիա վարդապետը գրում է. «Ջնոյն և Մովսէս նկարագրեաց յերկուս նոյազան վիճակեալս, մին՝ Տեառն, և մին՝ Ազայելի, այսինքն՝ բարկութեան Աստուծոյ. որ և Տեառն ելանէր վիճակ՝ սպանեալ լինէր, իսկ Ազայելցին՝ ազատեալ կապեալ ի նա որդան կարմիր, և արձակէին յսկոխ անապատ, և անդ կերակրէր գերանութին երկրին զամն ողջոյն, անուանըս պահելով ի գազանաց և ի կտորաբէլ ամին դառնայր անդրէն ի բանակն՝ սպիտակա-

¹⁰ Խնդրո առարկա երկը պարունակող Վենետիկի Մխիթարյան Մատենադարանի № 468 ձեռագրի (Օտողնտիր, 1289 թ.) ստորին լուսանցքներում «Ի Յովնան վերլուծութիւն», «Յոնանու Ամաթեալ», «Յովնանու» նշումների հետ հանդիպում է նաև նույն գրչի «Ի Յովնան՝ Անանիա վարդապետի Նարեկացու» նշումը, որի մասին հրատարակիչը հետևյալ ծանուցումն է տալիս. «Այս երևույթս ցոյց կու տայ մեզ, թէ հնագոյն բնագրի մէջ բառս՝ «Նարեկացու»՝ չկար, ինչպես խորագրէն կը տեսնուի և թէ ԺԳ դարում անգամ այդ ճառի մասին տարակուս կար: Հետևաբար, մեր գրիչն այլ՝ ըստ կամս իրեն ծանօթ Անանիա Նարեկացույ ծանօթագրած է զայն, բայց ճառիս լեզուն շատ կը տարբերի Անանիա Նարեկացույ լեզուէն». Հ. Բ. Սարգիսեան, Անանիա Թարգմանչի..., էջ 1, տողատակ: Այս տեսակետից նույնքան հատկանշական է այն իրողությունը, որ Մաշտոցյան Մատենադարանի № № 8281 և 998 ձեռագրերում Անանիա վարդապետի «Ի խորհուրդ Յովնանու մարգարէի» երկին (էջ 12բ—15ա, էջ 194բ—198ա՝ մի քանի միավորից) հետևում է, այժմ արդեն ստո:գապես Անանիա Նարեկացուն պատկանող «Արդ եթէ կամիցիս յաղթես աշխարհի...» սկզբածքով խրատը (էջ 24բ—25ա, վերջից թերի, էջ 395ա—396ա. Այս մասին տե՛ս Հրաչյա Թամրազյան, Անանիա Նարեկացու խրատաշարքը, ՀՍՍՀ ԳԱ, «Լրաբեր» Հաս. գիտ., 1979, № 11, էջ 78—92). Հանգամանք, որ զատորոշելով այս երկու հեղինակներին, իր նպատակն է բերում ճառիս հեղինակային պատկանելության ճշգրտման հարցում:

ցեալ և լուսակիզն ստեալք մաքրեալ, և կարծրութիւն որդան ի նոյն ապիտակութիւն փոխարկեալ²⁰։ Ազայնի հետ կապվող այս հատվածը, որ, Ն. Բ. Սարգիսյանի նկատումով, Աստվածաշնչի որոգիչյան վեցիջյանի կամ մեզ անհայտ մեկ այլ աղբյուրի մի քնկորն է²¹, մեր կարծիքով Եփրեմ Ասորու Ղևտացվոց մեկնության մի դրվագի նշմարելի ազդեցությունն է կրում։ «Ի խորհուրդ Յովնանու» հատվածն իր ածրողության մեջ Եփրեմի մեկնության համապատասխան հատվածի կառուցվածքի հետևողությամբ է ստեղծվել²²։ Բաղդատելի երկու քնկորներում էլ դևտական հատվածի մեկնությանը հետևում է Եսայու մարգարեությունից քերվող վկայությունը (Ես. Ա 18—19) այն տարբերությամբ, որ վերջինս Եփրեմի մեկնության մեջ վկայակոչված է ամբողջությամբ, մինչդեռ Անանիա վարդապետի ճառում բացակայում է վերջին նախադասությունը։ Սակայն զուգահեռ հատվածների մեջ առավել հատկանշականը մախ այն է, որ Անանիան նույնությամբ քերում է Աստվածաշնչի Յոթանասնից թարգմանությանը անձանթ և սակայն հայ մատենագրությանը միայն Ս Եփրեմի տվյալ մեկնությանը հայտնի Ազայել (Ազազայել) անունը։ Ազայելի, իբրև «քարկութեան Աստուծոյ» Անանիայի ըստագարանությունը ուղղակիորեն ծագում է բացատրապես Ս. Եփրեմի Ղևտացվոց մեկնության մեջ հանդիպող հետևյալ բացատրությունից. «Սոյնպէս և Ազազայել, զի իշխեցնն գասսկութիւն նորա և զքարկութիւն նորա, որ եղև ի վերայ նոցա յանապատի... զի Ազազայելը՝ Մասսկութիւն Աստուծոյ անուանի²³», որն էլ իր հերթին, հավանաբար, վերցված է հինկտակարանային անվավերներից Ենովքի անվամբ հայտնի

պարականոնից, որ «Աստու զիւն ապրտամբա՝ անդրբրնեղեղեյան հնկաների պարագլոխ» Ազազայելը²⁴, Եփրեմյան մեկնության մեջ ըստ պատշաճի ներկայացվել է իբրև «սասսկութիւն Աստուծոյ», մի բացատրություն, որ միանգամայն համահաստ է Անանիա Օրոսկացու վերն ընդգծված Ազայելի, իբրև «քարկութեան Աստուծոյ», մեկնություն-ստուգարանությամբ։ Երրորդ, Աստվածաշնչի քաջ հայտնի «Յոթանասնից» և «Պեշիտոս» անունը կրող թարգմանություններում սակա «քարկութիւնս երկրի կերիօից» (Ես. Ա 19)²⁵ ընթերցվածի դիմաց Ս. Եփրեմն ունի «գերանութիւն երկրի կերիցէք» բառակապակցությունը։ Եփրեմյան այս ընթերցվածի որոշակի ազդեցությունն է կրում Անանիա վարդապետի դևտական հատվածի մեկնության մեջ սակա «կերակրէր գերանութիւն երկրին» ընթերցվածը։ Եվ վերջապես՝ չորրորդ, Ազայելին (Ազազայելին) նվիրաբերվող նոխագի անապատում մեկ տարի մնալու մանրամասնը բացակայում է Աստվածաշնչում առհասարակ և սակա է միայն Ս. Եփրեմի այս մեկնության մեջ, որի ազդեցությամբ և Անանիան նշում է, թե «կերակրէր գերանութիւն երկրին զամն ողջ»։

Հովնան մարգարեին նվիրված այս գործում լավագույնս դրսևորվում է ճառագիր հեղինակի ոչ միայն աստվածաբանական հմտությունները, այլև մեկնողական դատողություններն ինքնուրույնաբար մտակառուցելու հազվադեպ շնորհները։ Այս հանգամանքը շեշտելի է թվում հատկապես այն պատճառով, որ իր ժամանակի մատենագիրների նման քաջատեղակ լինելով Ս. Ոսկերեքանի ու Ս. Եփրեմի գործերին և, ամենայն հավանականությամբ, ծանոթ լին-

²⁰ Ն. Բ. Սարգիսյան, Անանիա Թարգմանիչն..., էջ 9: Աստվածաշնչի կանոնական տեքստում բացակայող «Ազայել անունը հայ մատենագրության մեջ մինչև այժմ հիշատակված էր համարվում լույ չորս անգամ, այն էլ Եփրեմ Ասորու Ղևտացվոց մեկնության մեջ (Ն. Անտոյան, Հայերեն նոր քառեր թիւ մատենագրության մեջ, հտ. Բ, Վենետիկ, 1926, էջ 286—287, նույնի՝ Հայերեն արժատական բատարան, հտ. Ա, Երևան, 1971, էջ 81, նաև՝ Ն. Հովհաննիսյան, Թատրոնը միջնադարյան Հայաստանում, Երևան, 1978, էջ 149): Մինչդեռ այս իրողությամբ պարզվում է, որ այն միայն թարգմանական այս գործում չէ, որ կենցաղավարել է։

²¹ Ն. Բ. Սարգիսյան, նշվ. աշխ., էջ 194:

²² Տե՛ս «Արքուն Եփրեմի Մատենագրութիւնը», հտ. Ա, Վենետիկ, 1836, էջ 222—223:

²³ Անդ:

²⁴ Ն. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 149: «Ազազի» անունը (azazel—azazel) սակա է ոչ միայն Հին Կտակարանի կրթաբերին քննարկում (The Hebrew-English Old Testament from the Bagster Polyglot Bible, London, 1971, p. 80, նաև Exodus et Leviticus, ed. K. Elliger et. W. Rudolph, Stuttgart, 1973, S. 101) ու հեռվի անվամբ անվավերում, այլև Իրիհեսի (PG. t. VII, col. 628A) և Ռոզիհեսի (PG. t. XI, col. 1364C) երկերում. Տես E. A. Sophocles, Greek Lexicon of the Roman and Byzantine Periods, (from B. C. 146 to A. D. 1100), vol. 1, N—Y, անթվ. p. 85.

²⁵ Տե՛ս The Hebrew-English Old Testament... The Septuagint Version of the Old Testament With an English translation and with various readings and critical notes, London, 1970, K18b qadišā diatēqē 'asiqtā (Vetus Testamentum Syriace), Urmtae, 1852.

լով հայրախոսական գրականության այդ հսկաների՝ Հովհան մարգարեին նվիրված ճաներին և՛ Անանիա վարդապետն, այդուհանդերձ, խնդրո առարկա երկում հանդես է բերում գնահատելի ինքնուրույնություն: Մի կողմից Անանիա վարպետի և մյուս կողմից Ոսկեքերանի ու Եփրեմի մեծանաբանությ ճառերը միմյանցից զգալի-

որեն տարբերվում են մեկնողական նյութի թելադրած ընդհանուր տեղիներում անգամ, ուր, թվում է, միևնույն երևույթի նկարագրությունն ու մեկնությունը կարող էր մեծանության եզրեր ստեղծել: Բերենք թեկուզ սույն իրողությունը փաստող երկու հատված Ոսկեքերանի համապատասխան երկից.

«Առեալ զնա ծովուն՝ իբրև կապարանի իմիք որովայնի ձկանն մատնեաց առ Տէրն պահել զփախուցեալն».

«Յովհաննու Ոսկեքերանի ճառք», էջ 89

«Իջեալ Յովնան ի պորտ ձկանն, իբրև պղնձի պարսպօք կարծրագոյն կողիք վիշապին... պահէր ամրութեամբ զաւանդեալն նմա զանձ».

Հ. Բ. Սարգիսեան, Անանիա թարգմանիչն..., էջ 8:

«Իբրև յատենի զամենայն քննէին» զինչ քո գործ, ուստի՞ գաս, յո՞ երթաս, յորմէ գաւառէ, յորմէ ժողովրդենէ ես դու: ...այլ իբրև ի դատաստանի ոտխացն մերձեցելոց վկայիցն շուրջ կացելոց և յանդիման եղելոց՝ ոչ յառաջագոյն դատաւորք զվճիռն ի վերայ բերեն, մինչև ինքն իսկ դատապարտեալն ոտխ իրում մեղանացն լինիցի, նոյնպէս և անդ նաւավարք արք բարբարոսք և անմիտք, որք յատեանս բարեկարգութիւնքն էին՝ նմանեցուցանէին»:
անդ, էջ 87:

«Գան և առ մարգարէն, քննել՝ թէ ուստի՞, և կամ յո՞ երթայ: Եւ իմացեալ զապստամբութիւն մարգարէին, կարգեցին ատեան: Նաև էր իբրև զբեմ դատաւորաց... իսկ նաւավարքն, ոչ իբրև զանմարդիս՝ յամբոյրս հատանէին զվճիռ մահուն, այլ իբրև մարդասէրս՝ քազում քննութեամբ և վիճակաւ յայտնէին զյանցանս մարգարէին, մինչև ինքնին պարտեալ՝ խտատվան լինէր զմեղս իր».
անդ, էջ 5:

Սակայն այլ է նշված հեղինակներից Անանիայի (ոչ թե մեխանիկորեն, այլ) ըստեղծագործարար օգտվելու պարագան: Եթե թերևս, ինչպես համեմատությունն է ցույց տալիս, տարակույսով կարելի է խոսել Ս. Եփրեմի համաբանությ գործից Անանիա Թիրակացու օգտվելու մասին²⁶, ապա նույնը չի կարելի ասել Ոսկեքերանի պարագային: Անկասկած է, որ մատենագիրս (դատելով վերոբերյալ քաղդաստման մեջ արձանագրելի տարբերությունների և, միաժամանակ, թող որ աննշան նմանությունների բնույթից²⁷) այսուհանդերձ աչքի առաջ է ունեցել Ոսկեքերանի նշված գործը: Սա նշանակում է, որ պատկերի կառուցման մտահղացման մեջ թերևս ինչոր չափով հարազատ մնալով Ոսկեքերանին, այսուամենայնիվ Թիրակացին կարողանում է ինքնուրույնությամբ լուծել մեկ-

նողական հնարների հետ սերտորեն ադերսվող գեղարվեստական մի շարք խընդիրներ: Աստվածաբանական, մեկնողական, ինչպես նաև՝ գեղարվեստական այն ինքնատիպությունը, որով հատկանշվում է Անանիա Թիրակացու այս գործը, թույլ է տալիս երկը հայ մեկնողական ճառագրության արժեքավոր արտադրանքներից մեկը համարել: Հիրավի. սույն հանգամանքն է հավաստում ոչ միայն մինչև Ծ—ԾԱ դարը ճառի՝ Ոսկեքերանի և Եփրեմի երկերի հետ խմբագրված լինելը, այլև նրա հետոց անտի գետնելված լինելու իրողությունը «վանական դպրոցներում ուսուցողական նպատակներով օգտագործվող»²⁸. մի այնպիսի կարևորագույն երկում, որպիսին է Տոնապատճառը: Ինչպես երևում է, տակավին մատենագրի կենդանության օրոք այս ճառը մեծ կշիռ ու հեղինակություն է ունեցել հայ մատենագրության մեջ առհասարակ և տեսական, վարդապետական գրականության! մեջ մասնավորաբար: Սրանով է պայմանավորված և այն ազդեցությունը, որ նա թողել է հետագա հայ

²⁶ Հ. Բ. Սարգիսեան, Անանիա Թարգմանիչն..., էջ 10:

²⁷ Սակայն բացառված չէ, որ խնդրական նմանությունները հետևանքը լինեն երկու հեղինակների մեկ ընդհանուր սկզբնաղբյուրներից, այն է՝ Փիլոնի վերոհիշյալ երկից, օգտվելու:

²⁸ Փ. Անթրաքյան, նշվ. աշխ., էջ 118:

մեկնողական գրականության վրա: Այդ են վկայում Հովհաննես Եզնկացի-Մործրեցու (Ներսես Շնորհալու Մատթեոսի մեկնության շարաձայնությունը հանդիսացող)

Մատթեոսի մեկնությունից և «Ի խորհուրդ Յովնանու մարգարէի» մտից հանդիպարփող հետևյալ երեք ստափլ ներկայանալի հատվածները.

